ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ՈՒՐԲԱԹ
24 ՄԱՅԻՍԻ 2013թ • № 13 (286)

www.syuniacyerkir.am

Չի՞ եղել արդյոք բեմական, Նո՛ւյն Ավարայրը խեղճ...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

«Հայռուսգազարդն» առաջարկում է շեշտակի բարձրացնել գազի սակագինը

ՕՐԱԿԱՐԳ

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն եւ «Հայռուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ-ն դիմել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետությունում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից ամսական մինչեւ 10.0 հազար նորմալ խորանարդ մետր սպառողներին (բաժանորդներին) վաճառվող բնական գազի սակագնի ու ամսական 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառողներին (բաժանորդներին) վաճառվող բնական գազի յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձեւի, ինչպես նաեւ գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման («Հայռուսգազարդ» ՓԲԸ), բնական գազի բաշխման գործունեության («Հայռուսգազարդ» ՓԲԸ) եւ բնական գազի փոխադրման գործունեության («Հայռուսգազարդ» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ) սակագների վերանայման հայտերով:

Ամսական մինչեւ 10.0 հազար նորմալ խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին (բաժանորդներին) վաճառվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի՝ - գործող սակագինը 132 000 դրամ, ներառյալ ԱԱՀ, - առաջարկվող սակագինը 221 000 դրամ, ներառյալ ԱԱՀ: Ամսական 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող սպառողներին (բաժանորդներին) վաճառվող յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման՝ - գործող բանաձեւը՝ P =243.13 x E, որտեղ P-ն 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառողներին (բաժանորդներին) վաճառվող, 7900կկալ/նորմալ խորանարդ մետր ջերմարարություն ունեցող, բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազ.խմ), ներառյալ ԱԱՀ, E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքի մեծությունն է, - առաջարկվող բանաձեւը՝ P = 392.05 x E, որտեղ P-ն 10.0 հազար նորմալ խորանարդ մետր եւ ավելի սպառողներին (բաժանորդներին) վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (դրամ/հազ.խմ), ներառյալ ԱԱՀ, E-ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքի մեծությունն է: Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման՝ - գործող սակագինը՝ 20.618 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, ներկրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար, - առաջարկվող սակագինը՝ 33.695 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, ներկրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար: Բնական գազի բաշխման՝ - գործող սակագինը՝ 13709.698 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, բաշխված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար, - առաջարկվող սակագինը՝ 26638.071 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, բաշխված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար: Բնական գազի փոխադրման՝ - գործող սակագինը՝ 6948.266 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, փոխադրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար, - առաջարկվող սակագինը՝ 12989.186 դրամ՝ ներառյալ ԱԱՀ, փոխադրված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետր բնական գազի համար:

eMedia.am, 14.05.2013

Հ.Գ. *«Հայռուսգազարդ» ՓԲԸ Սյունիքի ԳՔՄ տնօրեն Արթուր Խաչատրյանի հետ հարցազրույցը՝ հաջորդ համարում:*

«Հայռուսգազարդ» ՓԲԸ վարչական շենքը Երեւանում

Գորիսի երկրագիտական թանգարանի փապալումը՝ իրողություն

ՄՇԱԿՈՒՅԹ

Թանգարանների միջազգային օրը Գորիսի երկրագիտական թանգարանի փաստացի ղեկավար Վարդան Սարգսյանն այդպես էլ չայցելեց իր ղեկավարած հաստատություն (թեեւ Գորիսում էր), իսկ քաղաքապետ Նելսոն Ոսկանյանն այդ թանգարանում ստեղծված անմխիթար վիճակը բացատրեց հնարավորությունների բացակայությամբ ու հուսադրող ոչինչ չասաց թանգարանի դրությունը շտկելու եւ ցուցանմուշների զգալի մասին սպառնացող վտանգը չեզոքացնելու մասին:

Գորիսյան մերօրյա իրողությունները, ուզենք-չուզենք, հակասական (հաճախ՝ իրարամերժ) ընկալում ունեն հասարակության մեջ: Դա հատկապես վերաբերում է մշակութային կյանքին, որը, բազմաթիվ գորիսեցիների համոզմամբ, իր ավանդական ու բնականոն ուղուց խոտորված է ու տապալված: Մշակութային որոշ հաստատությունների դերն ու նշանակությունը նույնիսկ պատշաճ ըմբռնումի չեն արժանանում օրվա իշխանությունների կողմից: Տապալված ու «չհասկացված» մշակութային հաստատությունների շարքը համայնքում գլխավորում է Գորիսի երկրագիտական թանգարանը:

Երբ 1948թ. նոյեմբերի 29-ին Գորիսում հանդիսավորապես բացվեց գավառագիտական թանգարանը (այն ժամանակ այդպես էր կոչվում)՝ դա համարվեց մշակութային մեծ իրադարձություն ոչ միայն Գորիսում, այլեւ ամբողջ Զանգեզուրում, քանի որ թանգարանն ի սկզբանե ուներ տարածաշրջանային նշանակություն եւ առաքելություն: Թանգարանը ստեղծելու մասին ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում էր ընդունել 1946թ. սեպտեմբերի 14-ին: Եվ մոտ երկու տարի Գորիսի իշխանությունները, հանրապետության մշակույթի նախարարությունը նախապատրաստվում էին թանգարանի հիմնարկեքին, ցուցանմուշներ հավաքում Մեղրիում, Կապանում, Սիսիանում: Ճիշտ է, հետագայում երկրագիտական թանգարան ստեղծվեց Կապանում (1969թ.), պատմության թանգարան՝ Սիսիանում (1989թ.), բայց Գորիսի թանգարանը երկար տարիներ շարունակեց մնալ որպես մշակութային բացառիկ հաստատություն եւ կատարել գավառագիտական (սյունիքյան) առաքելություն, քանզի մոտ 5600 ցուցանմուշի (մի մասը՝ եզակի) օգնությամբ կարելի էր (եւ առայսօր կարելի է) հետազոտել, պարզաբանել մեր երկրամասի պատմության բազմաթիվ հարցեր: Բայց, որքան էլ տարօրինակ է, գիտամշակութային այդ հաստատությունը վերջին երկու տասնամյակում հետեւողականորեն մղվեց լուսանցք, անտեսվեց ու արհամարհվեց: Իհարկե, թանգարանային գործում շեղումների որոշ հիմքեր դրվել էին դեռեւս նախորդ շրջանում: Այսպես, տարիներ շարունակ պատշաճ շենք չհատկացվեց թանգարանին, իսկ 1989-ին, երբ վերա-

Շարունակությունը՝ էջ 7

Ինչո՞վ է պայմանավորված գարնանային զորակոչի անդրանիկ հավաքի ուշացումը

ԼԵՈՆԻԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Կապանի զինկոմ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

2013թ. Հայաստանի զինված ուժերի գարնանային թարմացման գործընթացը սկսվելու է սովորականից բավականին ուշ: Այդ, ինչպես եւ զինակոչիկների առողջական վիճակի, պատրաստվածության եւ գաղափարական դաստիարակության ու գարնանային զորակոչին առնչվող մյուս հիմնախնդիրների մասին է զրույցը Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանի հետ:

– Պարո՛ն Գրիգորյան, գարնանային նախորդ զորակոչերի հետ համեմատ այս անգամ զորակոչն ուշ է սկսվելու, անդրանիկ հավաքը տեղի է ունենալու հունիսի 13-ին: Ինչո՞վ է դա պայմանավորված:

– Այս գարնանային զորակոչի սովորականից ուշ մեկնարկը պայմանավորված է տասներկուամյա կրթական համակարգով, հնարավորություն է ընձեռվում պատանիներին իրենց ուժերը չափել բուհ ընդունվելու համար, այսինքն՝ նրանք պետք է օգտվեն կրթություն ստանալու՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրակայված (տվյալ դեպքում՝ բարձրագույն) իրենց իրավունքից:

– Ըստ Ձեզ դպրոցական նստարանից նորոնոր բաժանված եւ 18 տարին երեկ լրացած պատանին կարո՞ղ է իր փխրուն ուսերին տանել բանակային կյանքի դժվարությունները, գաղափարապես տակավին չհասունացած պատանին կարո՞ղ է կատարել հայրենիքի պաշտպանի իր դերը: Դպրոցն ավարտելուց տասը օր հետո շրջանավարտը կարո՞ղ է զորակոչվել բանակ:

– Ոչ թե կարող է, այլ պարտադիր զորակոչվելու է: Զինակոչիկի գաղափարական պատրաստվածությունը պայմանավորված է նաեւ դպրոցում ստացած կրթությամբ ու դաստիարակությամբ: Դպրոցում դասավանդվում է նաեւ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան: Բարձր դասարանցիների հետ անցկացվում է կրակային պատրաստություն, հրաձգարանում պատանիները կրակում են ինքնաձիգով: Գաղափարական պատրաստվածության մյուս մասը

Շարունակությունը՝ էջ 5

Այսնյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՈՒՐԲԱԹ • 24 ՄԱՅԻՍԻ 2013Թ • № 13 (286)

ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «2013-14 ուսպարում մարզում փակվող դպրոց չի լինի»

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

«Հանրակրթության մասին» օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հանրակրթության համակարգի պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում հանրակրթության գործընթացին մասնակից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում ՀՀ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի, պարտադիր հիմնական ընդհանուր կրթության եւ անվճար միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը: Սյունիքի մարզում հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը 120 է, որից՝ 76 միջնակարգ, 36 հիմնական, 2 տարրական, 5 ավագ, 1 հատուկ կրթահամալիր: 2012-13 ուստարում կատարված աշխատանքների, հետագա փոփոխությունների, ունեցած ձեռքբերումների մասին է զրույցը Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնակատար Լեւոն Մարգարյանի հետ:

– Պարո՛ն Մարգարյան, եթե ամփոփելու լինենք 2012-13 ուստարին, մարզի հանրակրթության ոլորտում ուսումնական ինչպիսի՞ ձեռքբերումներ ունեցանք:

– 2012-13 ուստարում առարկայական օլիմպիադաներից հանրապետական փուլում 53 հոգի արժանացել է դիպլոմների եւ գովասանագրերի, իսկ մեկը՝ Կապանի N2 ավագ դպրոցից, իրավունք է ստացել մասնակցելու կենսաբանության միջազգային մրցույթի: Մայիսի 15-ին Սիսիանում ավարտվեց մանկապատանեկան ասմունքի 6-րդ փառատոնի մարզային կիսաեզրափակիչ փուլը, որն անց է կացվում ամեն տարի Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո: Այս տարի աշակերտները ներկայացրել են Համո Սահյանի եւ Պարույր Սեւակի ստեղծագործությունները: Մարզային փուլից 7 հոգի հնարավորություն է ստացել մասնակցելու հանրապետական փուլին, որը տեղի կունենա մայիսի 26-27-ին Ջերմուկում՝ 2 տարիքային խմբով՝ կրտսեր եւ ավագ: Նախնական տվյալներով՝ ունենք մեդալի 17 հավակնորդ, Կապանից՝ 1 հոգի, 6 հոգի՝ Գորիսից, 9 հոգի՝ Սիսիանից, Վերիշենի գյուղական դպրոցից՝ 1 հոգի: Ի դեպ, նշեմ, որ անցյալ ուսումնական տարում Սյունիքի մարզը մեդալակիրների թվով առաջինն էր (9 մեդալակիր): Սյունիքի մարզպետարանում «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունը մայիսի 25-26-ին «Անգեղակոթի Սուրբ Վարդան մատուռը» թեմայով գիտական կոնֆերանս կանցկացնի:

– 2012-13 ուստարում քանի՞ շրջանավարտ հրաժեշտ կտա դպրոցին:

– 2012-13 ուստարում մարզում դպրոցը կավարտի 1445 շրջանավարտ, անցած տարի այդ թիվը 1741 էր: Շրջանավարտների թվի նվազումը բնորոշ է հանրապետության բոլոր դպրոցներին: 774 շրջանավարտ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար միասնական ավարտական քննություններ հանձնելու հայտ է ներկայացրել: Արդեն հայտնի են քննական կենտրոնները (այն դպրոցները, որտեղ անց են կացվում միասնական քննությունները, կոչվում են քննական կենտրոններ)՝ Կապանի N9 ավագ, Գորիսի N1 ավագ, N3 հիմնական եւ Սիսիանի ավագ դպրոցներ: Սիսիանում կանցկացվեն միայն «Հայոց լեզու, գրականություն» եւ «Մաթեմատիկա» առարկաների քննությունները: Դպրոցներն ապահովված են անհրաժեշտ պայմաններով՝ միասնական քննությունները հավուր պատշաճի կազմակերպելու եւ անցկացնելու համար: Այս տարի ամենաշատ հայտեր ներկայացվել են «Հայոց լեզու, գրականություն» եւ «Մաթեմատիկա» առարկաներից քննություններ հանձնելու համար:

Շարունակությունը՝ էջ 6

լուրեր

Մայիսի 2-ին Կապանի Շահումյան փողոցի 20/44 հասցեում բացվել է «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության գրասենյակը: «Ռոստելեկոմ» Հայաստանի ցանցն ամբողջությամբ հիմնված է օպտիկա-մանրաթելային մալուխի վրա՝ ծածկելով ՀՀ տարածքի 80%-ն ու տարածվելով ավելի քան 2500 կմ: Այն միացված է տարածաշրջանի հիմնական մագիստրալային ցանցերի եւ տրաֆիկի փոխանակման խոշորագույն հանգույցների, ինչպես նաեւ Իրանի եւ Վրաստանի հետ միջազգային կապուղիների միջոցով: Բացման արարողությանը ներկա էին Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը եւ ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Փարամազյանը: Երկու կողմերի միջեւ համագործակցության հուշագիրը կնքվել է Կապանի քաղաքապետարանում: Ընթացիկ տարում համագործակցությունն կլինի չորս ուղղությամբ: Ընկերությունը նաեւ նախատեսել է Կապանում իրականացնել կրթական ծրագրեր դպրոցականների եւ մարզկենտրոնի ուսանողության համար:

Ըստ Սյունիքի մարզի դատախազության տարածած հաղորդագրության՝ մարզի քննչական բաժնում ավարտվել է մի խումբ անձանց կողմից՝ նախնական համաձայնությամբ իրացնելու նպատակով թունավոր նյութ հանդիսացող մետաղական սնդիկի ապօրինի շրջանառություն կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը: Մինչդատական վարույթում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Վաղարշակ Գրիգորյանը, ձեռք բերելով եւ իրացնելու նպատակով իր մոտ պահելով թունավոր նյութ հանդիսացող մետաղական սնդիկ, 2013թ. փետրվարի 9-ին նախնական համաձայնության է եկել իր հորեղբոր որդու՝ Մեր Գրիգորյանի, ապա նաեւ վերջինիս ընկերոջ՝ Գարեգին Հակոբյանի հետ, եւ որոշել են այն փոխադրել Երեւան ու իրացնել: Այդ նպատակով 2013թ. փետրվարի 10-ին՝ ժամը 20-ի սահմաններում, թունավոր նյութ հանդիսացող մետաղական սնդիկը Կապանից փոխադրել են Երեւան: Ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա Մեր Գրիգորյանին, Գարեգին Հակոբյանին եւ Վաղարշակ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 275-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Մայիսի 18-ին ավարտվեց Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնությունը: Վերջին՝ 42-րդ տուրում Կապանի «Գանձասարը» նվազագույն 1:0 հաշվով հաղթեց «Միկային»: Գոլը խփեց Նարեկ Բեգլարյանը: Բայց երկու կողմի համար հանդիպումը սկզբունքային նշանակություն չուներ, քանի որ մեկ տուր առաջ «Միկան» դարձել էր արծաթե մեդալակիր, «Գանձասարը»՝ բրոնզե: Երրորդ մրցանակակիր դառնալով՝ «Գանձասարը» իրավունք նվաճեց հաջորդ մրցաշրջանում մասնակցել Եվրոլիգայի գավաթի խաղարկությանը: Հանդիպման ավարտից հետո մրցանակակիր թիմերի մարզիչներին, ֆուտբոլիստներին հանձնվեցին մեդալներ, խրախուսական պարգեւներ եղան «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի կողմից:

Փիրզատ

ՍՅՈՒՆԵՑԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Ուշ միջնադարի հայ ուղեգիրների շարքում Փիրզատը (Փիրզատա Ղափանցի, Փիրզատե Սիսիանցի եւն) ինչ-որ չափով առեղծվածային դեմք է, ի տարբերություն իր նախորդների, լինելով աշխարհական եւ այսպես ասած՝ սակավախոս: Նա բացի իր ուղերթից գրեթե բան չի հաղորդում, եւ այս հանգամանքը նկատի ունենալով՝ ուսումնասիրողները նրա կարճառոտ ուղեգրությունը նաեւ հիշատակարան, հիշատակագրություն կամ օրագրություն են անվանում: Համառոտության պարագան զարմանալի է, եթե նկատի առնենք, որ ճանապարհորդությունը երկարատեւ է եղել, երկու տասնամյակից ավելի:

Ուղեգրությունն առաջին անգամ տպագրվել է «Բազմավէպի» մեջ (1882, էջ 317-318): Բնագրին նախորդում է ֆրանսերեն թարգմանությունը, որ երկու էջ է զբաղեցնում («Voyage de Pirzade de Kapan», էջ 313-314): Հին սովորությամբ խմբագրությունը չի նշում օգտագործված աղբյուրը եւ հրապարակողի (նաեւ ֆրանսերեն թարգմանչի) անունը: Կարելի է ենթադրել, որ դա Ղեւոնդ Ալիշանն է եղել:

Հետագայում Ղ.Ալիշանն առիթներ ունեցել է անդրադառնալու այս ճանապարհորդին, որ ինչպես ինքն է գրել՝ «յածեալ է ընդ ամենայն աշխարհ միջին եւ արեւմտեան Եւրոպիոյ, թուի վաճառականութեան աղագաւ, քանզի թերի մնայ ինքնագիր յիշատակարան նորին անոճ եւ անհարթ» (Ղ.Ալիշան, Վենետիկ, 1893, էջ 220): Փիրզատի հայրենի Գետաթաղ գյուղի կապակցությամբ է հիշել Ալիշանը նրան եւ տողատակի ծանոթագրության մեջ զետեղել է ուղեգրությունը, նախապես նկատելով. «Անգրագէտ, այլ բազմաշրջութեամբն եւ սուղ դիտողութեամբքն եւ աշխարհիկ լեզուաւն (քաւ ի սղալագրութենէն), ոչ անարժան նշանակութեան, վասն որոյ եւ ցաւ է զի մնայ բանն» (անդ): Բնագրից հետո Ալիշանը հարում է. «Աստ թերի մնայ ձեռագիրն, որով եւ հետաքննական տեսութիւնք Փիրզատէի ի քաջանշան երկրի անդ Փռանկաց եւ յակնադիտակ մայրաքաղաքին, յորմէ ոչ է յայտ ո՞ւր գնաց եւ ուստի դարձաւ ի գիւղ իւր Գետաթաղ» (անդ, էջ 221): Այս դեպքում եւս ընթերցողին տեղեկություն չի տրվում ձեռագրի մասին, որը հիմք է դարձել հրապարակման:

Հաջորդ կարեւոր անդրադարձը նույն հեղինակի «Հայ-Վենետ» աշխատության մեջ է (Ղ.Ալիշան, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 458-459): Այստեղ գտնում ենք ուղեգրության՝ գլխավորապես Վենետիկին վերաբերող հատվածները: Ղ. Ալիշանն անհրաժեշտ է համարում նկատել, թե Վենետիկ այցելած բազում հայ ճանապարհորդների մեջ «նշանաւոր է մեզի համար Փիրզատէ Ղափանցի, որ 1586-87-ին ոչ միայն ի Վենետիկ, այլեւ Եւրոպիոյ ուրիշ կողմեր պտըտեր է, զորոնք իր ռամկական լեզուով նշանակէ, եւ որքան ալ ցամաք է գրածն, գոնէ տեսած տեղեաց շատութեանն համար՝ կ՚արժէր որ ընդօրինակեմք» (անդ, էջ 458): Այս վերջինից է օգտվել «Հայոց անձնանունների բառարանի» հեղինակը (Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Երեւան, 1962, էջ 207) եւ՝ գրել, թե Փիրզատը իր ճանապարհորդության «համառոտ նկարագիրն ունի տեղական բարբառով», այսինքն՝ Սյունիքի:

«Հայ-Վենետը» ձեռքի տակ ունեցել է Օքսֆորդի Բոլդեյան գրադարանի հայերեն ձեռագրերը ցուցակագրող Տիրայր վարդապետը (Tiayre Wardapet, General catalogue of the armenien manuscripts in the Bodleien Library of Oxford. Մաշտոցի անվ. մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 122, վ. ԻԳ): Նրա ցուցակը կազմում է 24 ընդհանուր տետր, եւ մեզ հետաքրքրող թ. 122 ձեռագրի նկարագրությունը՝ կատարված 1910-ին, գտնում ենք նախավերջին տետրի մեջ, 2055-2062 էջերում: Ձեռագիրը ԺԶ դարի գրչության Աղօթագիրք է, որ պատկանել է Փիրզատին, «ընծայուած 1635թ. Արքեպիսկ. Լօտի կողմից եւ մի ժամանակ կրում էր Lond. A32 եւ 163 համարները- Biblioteca Bedleiana» (էջ 2055):

Նկարագրությունից այն տպավորությունն ենք ստանում, որ Փիրզատը նշագրումներ է արել ձեռագրի էջերում ու անկյուններում: Եւ եթե մի կողմ թողնենք հիշատակագրության հանգամանք ունեցող գրառումները, մյուսները կարող ենք միավորել այն գործի մեջ, որ ոմանք ուղեգրություն եւ ոմանք օրագրություն են անվանում: Ցավոք, սակայն, ձեռագրացուցակը հնարավորություն չի տալիս ամբողջացնելու երկը, որովհետեւ իտալերենի եւ գերմաներենի թվականներին վերաբերվող գրառումները ամբողջությամբ չեն բերվում ցուցակում: Ուստի բնագրի վերջնական վերականգնումը հնարավոր կլինի բուն ձեռագրի ուսումնասիրությամբ միայն: Այդ ցաքուցրիվ գրառումների մասին Տիրայր վարդապետը գրում է. «Մատենիս մէջ ցրուած զանազան գրութիւնները՝ բոլորն էլ անվարժ նոտրգրով, գրուած Փիրզատի ձեռքով» (էջ 2057): Հիշատակագրական բնույթի նշումները լրացուցիչ տեղեկություններ են պարունակում, ուստիեւ արժանի են ուշադրության: Այսպես, թղ. 3ա «Գիրս գրեցաւ Փարիզ քաղաքն, Հայոց թվին ՌԾԶ (=1607) մարտ ամսին ԺԵ»: Թղ.59բ Փիրզատը թողել է հետեւյալ հիշատակագրությունը, որ մասամբ չափածո է. «Այս սէրս իմ սրտիս, եւ անմոռաց իմ սրտիս, մարմինս ին տուն է տրունի. միտքս իմ նման սուրբ քահանի. սիրտս նման սուրբ սեղանի, խորհուրդս անարատ պատարագի, աղօթքս խունկ ընդունելի հայրն բիրտ յանձինս ամուր, սրտին պարիսպ մտացս ամուր, հոգին սուրբ ճշմարիտ հոգոյս ամուր: Արդ ես յումմէ սարսեալ թողամ, կապեմ զեզ /՞/ եւ երդում տամ վկայութեամբ սրբոց այսորիկ. զոր գրեցաք, որ լինի գիրս այս եւ ուր կարդացի՝ ո՛չ մերձենայ ի տուն այն չար. եւ ո՛չ որոգայթ, ո՛չ ի այր մարտ եւ ո՛չ ի կին, ո՛չ ի ծեր եւ ո՛չ ի տղայ, ո՛չ երիտասարդ եւ ո՛չ ի կուսան, ո՛չ ե մին /=ի մին/ գնալ եւ ոչ ի ճանապարհի, այլ կապած է. ամենայն չար եւ դէմ ծառայիս Աստուծոյ Փիրզատին» (էջ 2056-2057): 1602թ. մարտի 12-ին նա գրառում է կատարել թղ. 62բ. «Պահեայ, Տէր Աստուած» եւ թղ. 60բ- «Ամենցուն բարեխօսութեամբն պահեայ Տէր Աստուած զծառայս Աստուծոյ Փիրզատի», որից հետո ցուցակագրողը հղում է՝ «Հմմտ. Մանչեստրի ցուց. N13 N5» (էջ 2057):

Վերջապես, Փիրզատը նշել է այն ամենագործածական օտար բառերը, որ պետք է գիտենալ սովորական շփումների ժամանակ, հայատառ լատիներենով բերել «Ave Maria» աղոթքը: Թղ. 69ա- իտալերեն թվականները, ինչպես ցուցակագրողն է ասում՝ «իւր գործադրութեան համար»:

«Ուն-Ա[1], /../ - Բ[2], *թիրկ* - Գ[3] *քաթր*-Դ[4], *չինքու*-Ե[5] եւն: Մին-

Շարունակությունը՝ էջ 4

Սիսիանի նորաբաց կարի արտադրամասում

Վաղվա օրվա հավպով

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր արթնացող գարնանաբույր օրը ցուրտ ու թաց էր, ջերմություն չէր խոստանում: Բայց դրանից հոգուս գարունն ամենեւին աշնան չփոխվեց, ավելին՝ այն շուտով ջերմանալու է փաք խոհերիցս ու դառնալու է սիրով լեցուն փողեր, քանզի գրելու եմ լավի, գեղեցիկի, բարու մասին:

Կփորձեմ պրպտել, պեղել հիշողությանս պահոցները, թերթել հարազատ ոստանիս անցյալի հատկապես այն էջերը, երբ Սիսիանը ներկայանում էր իր ուրույն արդյունաբերական դեմք-դիմագծով: Պատմական փոքրիկ էքսկուրսը, թերեւս, չէր խանգարի, որպեսզի ընթերցողի հիշողությունը եւս թարմանար Սիսիանի երբեմնի արդյունաբերական հսկա ձեռնարկություններով (չեմ վախենում «հսկա» բառն օգտագործել), ինչպիսիք էին սննդի կոմբինատը, պանրագործարանը, էլետրալամպերի գործարանը, բուժտեխնիկայի գործարանը, տրիկոտաժի ֆաբրիկան… Ցավոք, այս ձեռնարկություններն այլեւս պատմություն են ու հիշողություն նրանց համար, ովքեր տարիներ շարունակ սեփական տքնանքով են վաստակել իրենց ապրուստի միջոցը: Ավա՜ղ, սրանք այն կառույցներն էին, որոնք չդիմացան ժամանակի քննությանը:

Ինչեւէ, հաճելի հիշողություններով զինված՝ գնում եմ կատարելու մի առաքելություն, գնում եմ լուսաբանելու Սիսիանի «նորելուկ» կարի արտադրամասի գործունեությունը:

Նրա՝ «Ավալ-Թրեիդ» ՍՊԸ պատմությունը սկսել է բոլորովին վերջերս՝ 2013թ. մարտի 18-ից, իսկ այդ պատմությունը կերտողները մեր հայրենակիցներն են՝ Արմեն Գալստյանը, Սիմակ Գյանջումյանը եւ ազգությամբ ռուս Ալեքսանդր Շեպելովը:

Իրենց հյուրընկալ հարկի տակ ինձ սիրով ընդունեցին եւ կարի արտադրամասի մասին պատմելու առաքելությունը ստանձնեցին արտադրամասի գործադիր տնօրեն Արմեն Անդրեասյանն ու կադրերի գծով տեսուչ Սուսաննա Գալստյանը:

Երբ փորձեցի տեղեկանալ, թե ինչպես եւ երբ հղացավ կարի արտադրամաս հիմնելու գաղափարը, Սուսաննա Գալստյանը (հիմնադիրներից մեկի՝ Արմեն Գալստյանի քույրը) անթաքույց հպարտությամբ նշեց, որ գաղափարն ավելի քան վեհ էր, ազգանպաստ, հայրենանվեր, քանի որ տասնյակ ընտանիքներ էին փրկվելու արտագաղթի ճիրաններից ու գործազրկության ամենակուլ երախից:

Իսկ այն հարցին, թե ինչու հատկապես Սիսիանում բացվեց արտադրամասը, Ս.Գալստյանն ասաց.

– 20 տարի առաջ, իհարկե, ոչ լավ օրից, այս սիսիանցի երիտասարդները եւս բռնեցին օտար ափերում բախտ որոնելու անիմանալի, արկածներով լի, անորոշ ճանապարհը: Գործազրկության ահավոր ցավը ճաշակած տղաները մի պահ մոռացան այդ ամենը, իրենց մեջ ուժ գտան արարելու, ստեղծելու, ու որպեսզի սփոփեն հոգու ցավը, ձեռք ձեռքի, խելք խելքի տվեցին, փորձ, գիտելիք, հմտություն, նվիրվածություն միախառնելով՝ Դոնի Ռոստովում ստեղծեցին կարի արտադրամաս: Ունենալով որոշակի փորձ, հայրենակիցներին նեցուկ լինելու մեծ ցանկություն՝ տղաները ձեռնամուխ եղան «դուստր» ձեռնարկություն ստեղծելու վեհ գործին, դա այն դեպքում, երբ տարածաշրջանի երբեմնի հզոր ձեռնարկությունները վաղուց անջուր ջրաղացների են վերածվել՝ առաջացնելով այսօրվա գործազուրկների հոծ բանակը:

– Ինչպե՞ս եւ ինչի՞ց սկսեցիք կարի արտադրամասի գործարկումը: Կայի՞ն դժվարություններ, ինչպե՞ս հաղթահարեցիք դրանք, – ահա հարցերի խումբ, որոնց պատասխաներն ակնկալում էի Արմեն Անդրեասյանից:

– Գործընթացը, անշուշտ, պատասխանատու էր, եւ, իհարկե, զերծ չէր դժվարություններից: Տեսականորեն ամեն ինչ լավ էր, հերթը գործնականինն էր, որի իրագործմանն ուղղեցինք մեր ողջ ռեսուրսը:

– Ինժեներական գիտելիքներ, հմտություններ, փորձ, համապատասխան աշխատուժ, որոնց առկայությունը կարճ ժամանակահատվածում հնարավորություն տվեց ստեղծել արտադրամասը, – մեր զրույցին է միանում Ս.Գալստյանը:

Գնալով ավելի էր մեծանում հետաքրքրությունս՝ որպե առաջ լինելու եւ տեսնելու «մինի» ֆաբրիկան, որին ծանոթացնելու նախաձեռնությունը ստանձնեցին Ս.Գալստյանն ու նախկին տրիկոտաժի ֆաբրիկայի մասնագետ Գոհար Համբարձումյանը, ով մասնագիտական խորհուրդներով, փորձով, գիտելիքներով, անշուշտ, կնպաստի արտադրամասի առաջընթացին:

Ահա եւ արտադրամասը՝ լուսավոր, մեծ, ընդարձակ, ուր մեծ եռանդով, փութաջանորեն տքնում է մոտ 100 մարդ: Սիրով արձանագրեցի վերջին թիվը, որը, անշուշտ, համատարած գործազրկության պայմաններում մեծ հարված կլինի գործազրկություն կոչվող չարիքին:

Գաղտնիք բացահայտած չեմ լինի, եթե մեկ անգամ եւս բարձրաձայնեմ, որ մեր պետության ամենացավոտ, ամենախոցելի տեղը գործազրկությունն է: Ուրախալի մի փաստ արձանագրեցի, որ որպես աշխատուժ՝ արտադրության մեջ ներգրավված է նաեւ զբաղվածության կենտրոնում հաշվառված 11 գործազուրկ եւս, ովքեր զբաղվածության կենտրոնի անմիջական միջնորդությամբ, որոշակի փորձ ձեռք բերելուց հետո, անցել են հիմնական աշխատանքի:

Այնուհետեւ խոսք եմ բացում ներկրվող հումքի, թողարկվող արտադրատեսակների, որակական ցուցանիշների, արտահանման, իրացման հարցերի շուրջ, որոնց ի պատասխան, գործադիր տնօրեն Ա.Անդրեասյանն ասաց.

– Մեր աշխատանքում կարեւորում ու հիմնական շեշտը դնում ենք որակի, առաքման, շուկայում հաստատուն տեղ ու դիրք ունենալու վրա: Իսկ թողարկվող արտադրանքը՝ մեծի եւ փոքրի շապիկներ, տղամարդու ներքնաշորեր, անշուշտ, մրցունակ կլինի, հաջող քննություն կբռնի, եթե բարձրորակ լինի: Իսկ ինչ վերաբերում է իրացմանը, համոզված ենք, որ դա եւս հաջողությամբ լուծում կստանա:

Երջանիկ պատահականությամբ սույն հոդվածը գրվում էր այն օրը, երբ կարի արտադրամասը Ռուսաստան էր առաքում թողարկված արտադրանքի առաջին խմբաքանակը:

Հեռանկարների, առաջիկա պլանների, ծրագրերի մասին արտադրամասի ղեկավարության պատասխանը շատ համեստ էր. «Ժամանակից առաջ չընկենք»:

Այս փոքր-ինչ ժլատ պատասխանն ավելի քան խոսուն էր, քանի որ զգացի կարեւոր, թեեւ չասված, բայց ընկալելի մի բան՝ արտադրամասի վաղն ավելի քան լուսավոր է լինելու, քանի որ բոլորը սրտացավ են ու զինված վճռականությամբ:

– Մենք կանգ չենք առնելու ձեռք բերածով: Հետագայում, երբ հնարավոր լինի ընդլայնել արտադրության ծավալները, կմեծանա նաեւ արտադրամասի հզորությունը, իսկ դա ենթադրում է նոր աշխատատեղեր ունենալու հնարավորություն, – զրույցն այսպես եզրափակեց Ա.Անդրեասյանը՝ առանց դույզն-ինչ տատանվելու, համոզված, հույսով, հավատով, լավատեսությամբ…

Ես աներկբա վարակվեցի կարի արտադրամասի ղեկավարության լավատեսությամբ, համոզված, որ այսուհետ երկար, շա՜տ երկար ճանապարհ են անցնելու նրանք, որ հօգուտ հարազատ ժողովրդի է բաբախելու ձեռնարկության սիրտը, իսկ դրանից, անշուշտ, կշահի սիսիանցի տրիկոտաժագործը, սիսիանցի աշխատավորը:

Բարեգործությունը, բարեսիրությունն Աստծո կողմից տրված շնորհ են, երիցս կեցցեն այն մարդիկ, ովքեր այն դարձնում են իրականություն՝ ի շահ ժողովրդի:

Ես լիահույս եմ, որ դարի ցավերին ականջալուր այս մարդիկ, ովքեր որդեգրել են տասնաբանյա օրենքներից մեկը՝ «Սիրի՛ր մերձավորիդ»՝ այն դարձնելով աշխատաոճ, դարձնելով սկզբունք, արժանի են օրհնանքի: Իսկ օրհնանքը, անշուշտ, հնչելու է ամեն Աստծո օր, հնչելու է նրանց շուրթերից, ովքեր աշխատում են Սիսիանի նորաբաց կարի արտադրամասում, նրանց շուրթերից, ովքեր այլեւս լցված են հավատով, մեծ հավատով վաղվա օրվա նկատմամբ:

ԷՎԵԼԻՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Սիսիան

Լուրեր

Հայաստանի ոստիկանապետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանը մայիսի 22-ին այցելել է Սյունիքի մարզ: NEWS.am-ի աղբյուրների փոխանցմամբ, Գասպարյանը հանկարծակի այց է կատարել Սյունիք՝ տեղում ծանոթանալու ոստիկանության աշխատանքին:

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը Սյունիքի մարզ կատարած երկօրյա այցի շրջանակում մայիսի 17-ին այցելեց Կապան, հանդիպեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ: ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը նախորդ տարում տոնել է գոյության 20-ամյակը, ուստի դեսպանը համառոտ անդրադարձավ նրա քսանամյա ուղուն, իրականացրած ծրագրերին: Այնուհետեւ Ա.Սորոկինը ներկայացրեց տարածաշրջանի հասարակական-քաղաքական իրավիճակը: Հանդիպմանը քննարկվեց մարզում տուրիզմի զարգացման հեռանկարները: Դիվանագետը վկայականներ հանձնեց զբոսաշրջության զարգացմանը միտված ԵԱՀԿ եւ USAID կազմակերպությունների համատեղ իրականացրած ծրագրի շրջանակում կազմակերպված դասընթացների ունկնդիրներին: Հանդիպմանը մասնակցում էին Կապանի եւ Մեղրու հյուրանոցների, ռեստորանների, հյուրատների ներկայացուցիչներ: Այնուհետեւ ԵԱՀԿ-ի աջակցությամբ հիմնադրված «Կապանի կանանց ռեսուրս» ՀԿ կենտրոնում տեղի ունեցավ միջոցառում, որի ընթացքում լուսանկարների շարքով ներկայացվեց կենտրոնի քառամյա հաշվետվությունը: Կազմակերպությանն աջակցած անձանց հանձնվեցին շնորհակալագրեր:

Մայիսի 21-ին մարզպետարանի դահլիճում 2012-13 ուստարվա առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում առաջնություն շահած դպրոցականները դիպլոմներ եւ գովասանագրեր ստացան: Իսկ նախորդ օրը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում առաջին կարգի դիպլոմներ հանձնվեցին մարզից չորս դպրոցականի: Նրանցից մեկը ներկայացնում է Խնձորեսկի միջնակարգ դպրոցը՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից: Այս ուստարվա առարկայական օլիմպիադայում Սյունիքի մարզից 49 դպրոցական դիպլոմ եւ գովասանագիր է ստացել: Դպրոցականներին, նրանց ուսուցիչներին եւ ծնողներին պարգեւներ հանձնելու հետ մեկտեղ երախտագիտության խոսքեր հղեցին մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնակատար Լեւոն Մարգարյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչէ Գրիգորյանը: Անցկացված օլիմպիադայում մարզից մրցանակակիրներ չեղան մաթեմատիկա եւ ինֆորմատիկա առարկաներից:

Մայիսի 18-ին Կապանում տեղի ունեցավ արհեստական խոտածածկով խաղադաշտի բացումը, որն իր տեսակի մեջ երրորդն է հանրապետությունում: Շինաշխատանքները սկսվել էին 2010թ. ապրիլից: Կարմիր ժապավենը կտրելու պատիվը վերապահվեց «Գանձասար» ակումբի հովանավոր, «ՋՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանին եւ Հայաստանում Բրազիլիայի դեսպանին: Մարզադաշտին կից կառուցվել է եւս երկու փոքր խաղադաշտ: Բացման արարողության ժամանակ ելույթ ունեցողները համոզմունք հայտնեցին, որ նոր խաղադաշտն ազդակ կհանդիսանա Կապանում ֆուտբոլի զարգացման համար:

Այսնյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՈՒՐԲԱԹ • 24 ՄԱՅԻՍԻ 2013Թ • № 13 (286)

êÚàôÜºòÆ Ö²Ü² ä²ðÐàð¸À

Փիրզատ

Սկիզբը՝ էջ 2

չեւ հազար»: Թղ. 70ա *Թուքէշքա* /=Jedesco/ լեզու[ի]ն. համբէրքն. մէկի կասի *այն*, *ծվայ*-երկուս, *թէրէ*-երեք, *փէրա*-չորս, *փիթ*-ե[5] եւն: Մինչեւ հազար»: 71բ. «Փռանկի լեզուն՝ հացն-*պան*, միսն-*կռնայ*, կինուն-*վինոյ*, *սալի*-աղն. *փորմաճու*-պանիր եւն: Սովորական գործածութեան մի քանի բառ եւ ասացուածք. ինչպէս. Բարի լուս ասիլն *մումճեռնու* եւն: Թաքաւորին՝ *էջէ*, ահզատայն՝ *փրինճիբու*… եւն» (ընդգծումները մերն են - Ա.Մ.): Ակնհայտորեն այս գրառումներն է առաջին հերթին նկատի ունեցել Ղ.Ալիշանը, ենթադրելով, թե Փիրզատը իբրեւ վաճառական է այցելել արեւմտաեւրոպական երկրներ:

Ուսումնասիրելով Տիրայր վարդապետի ցուցակը՝ Աշոտ Հովհաննիսյանը փոքր-ինչ այլ տեսակետ է առաջադրում. Փիրզատն ազատագրական առաքելությամբ է եղել Եւրոպայում: Նա ենթադրում է, թե «1588-1607 թվականների ժամանակամիջոցում գեթ մի անգամ նա (Փիրզատը-Ա.Մ.) վերադարձած պիտի լինի հայրենիք եւ կրկին ուղեւորված Եւրոպա» («Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», հատ. 2, Երեւան, 1959, էջ 76): Ավելին, Ա.Հովհաննիսյանի կարծիքով Փիրզատը հիասթափված պիտի լինի Հռոմ, Ռուսաստան եւ Վրաստան կատարած այցելությունից, որովհետեւ գրել է, թե բոլոր քրիստոնյա ազգերը հարգանք են տածում հայերին, բացի «Հռոմայ ասքէն, ո[ւ]ռուսէն, վելիանէն» (անդ, էջ 73):

Հայ ազատագրական մտքի պատմության հետազոտողը Փիրզատին դիտում էր դարաշրջանի քաղաքային հետնախորքի վրա: ԺԵ դարում արդեն, զգալով, որ քաղաքական ասպարեզ է իջել բիրտ մի ուժ, որը չարիք կարող է դառնալ ոչ միայն մերձավոր տարածաշրջանի, այլեւ ամբողջ մարդկության համար, մտավոր եւ քաղաքական գործիչները տագնապով դիմում էին Եւրոպայի իրենց հավատակիցներին՝ համագործակցելու ընդդեմ թուրքերի: Ընդ որում, կարեւորագույն «խայծը» Երուսաղեմն էր, Տիրոջ գերեզմանը:

«Յիշատակք պատմութեանց ինքնակալութեան օսմանցւոց» բնագրում, օրինակ, վկայվում է. «Հուսկ յետոյ եղեւ հասարակ դաշնադրութիւն... Կամեցան, զի իւրաքանչիւրքն իւրաքանչիւրոցն լիցին ջատագովք. գերմանացիք, մաճառք, լեհացիք եւ այլք ամենեքեան մտին ի միաբանութիւն, զի թերես դիցեն ամենայն հնարաւոր կերպիւ սահման աճմանն օսմանցւոց» («Բանբեր Երեւանի համալսարանի», 1973, N3, էջ 191): Թուրքական վտանգը լավագույնս զգում էր Իրանը, արձագանքում քրիստոնյա հարեւանների մտահոգությանը:

1596թ. օգոստոսի 14-ին Քարթլիի Սիմոն թագավորը հայ բանագնացի ձեռքով նամակ է հղում Իսպանիայի Ֆիլիպ Բ թագավորին հայերեն եւ հունարեն՝ իր եւ երկու այլ թագավորների անունից, թե իրենք միաբանել են, որոշել՝ «զթուրքին գլուխն կոտորենք եւ զսուրբ Երուսաղէմ եւ զքրիստոնեայքն ի թուրքի ձեռաց ազատենք» (տե՛ս Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 75. հմմտ. «Պատմաբանասիրական հանդես», 1973, N3, էջ 220): Հետազոտողը կարծում է, որ Փիրզատը հենց այսպիսի բանագնացությամբ է եղել Եւրոպայում:

Համեմատած նախորդ ուղեգիրների հետ՝ Փիրզատն ամենից ավելի ընդհանրացած էր ներկայացնում այցելած երկրի պատկերը՝ քանի օրվա ճանապարհ է նախորդ հանգրվանից, որն է մայրաքաղաքը, վարչական հանգամանքը (անկախ իշխանություն, թագավորություն եւն), երկրի կառավարիչը, կրոնը: Ընդ որում, կարեւոր է, թե տեղի ժողովուրդն ինչպիսի քրիստոնյա է եւ ինչպես է վերաբերվում հայերին: Անշուշտ, կարող է եւ մի առնչությամբ այս կետերից մեկնումեկը չլիներ: Ինչպեսեւ հանդիպում են հավելյալ տեղեկություններ (մասնավորապես այն երկրների կապակցությամբ, ուր հայ համայնք կա): Սրանք հատկանիշներ են, որոնց թելադրությամբ մասնագետները գնահատել են այս անշուք բնագիրը:

Մենք ձեռքի տակ ունեցել ենք Փիրզատի օրագրություն-ուղեգրության բոլոր տպագիրները («Բազմավէպ», «Սիսական», «ՀայՎենետ»), սակայն, համոզված, որ բոլորի աղբյուրը Փիրզատի օքսֆորդյան ինքնագիրն է, հետեւել ենք Տիրայր վարդապետի ձեռագրացուցակին, որ ինչ-ինչ շահեկան տարբերություններ ունի եւ առավել լայն պատկերացում է տալիս մեզ Փիրզատի գործի վերաբերյալ:

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԱՆ

Ես՝ մեղավոր Փիրզատս, Պարսկաստանից, Ղափան երկրից, Յուրոտեն(1) ձորից, Գետաթաղ գյուղից (2), Պաստամեցոց ազգից, Զաքարեի թոռը եւ Միրզայի ու Հոռոմսիմի որդին, Իսայիի, Փարուի եւ Պահալավի եղբայրը: Այն տարին, որ Հայոց ՌԼԵ/1586/ թվին էր, ես իմ տնից ելա, գլուխս առա, աստանդական(3) մոլոր գնացի օտար աշխարհ: Եկա առաջին քաղաքը՝ Վան, այնտեղից ելա գնացի Պաղիշ քաղաքը, այնտեղից գնացի Հիզա քաղաքը, այնտեղից՝ Ղարա Հեմիթ քաղաքը, այնտեղից՝ Որբա քաղաքը, այնտեղից Հելեր քաղաքը, այնտեղից Ատանա քաղաքը, այնտեղից՝ Աղշահեր քաղաքը, այնտեղից՝ Գոնիա քաղաքը, այնտեղից՝ Ղարահասեր քաղաքը, այնտեղից՝ Քոթիա քաղաքը, այնտեղից՝ Իզնիկ քաղաքը, այնտեղից՝ Աստանբուլ քաղաքը, որ թագավորի գահանիստն է, այնտեղից՝ Ատրյանա(4) քաղաքը, այնտեղից՝ Ղարա Բողտանանց(5) երկիրը՝ է(ա)շ քաղաքը, այնտեղից՝ Լե(հ)ի երկիրը, նախ Կամայնից քաղաքը. Դճ/400/ տուն հայոց ազգն է՝ լուսավորչական: Մեջը ԺԲ/12/ հայ պարոն դատ են վարում, վեց հայկական եկեղեցի կա: Այնտեղից գնացի Իլով քաղաքը, ճ/100/ տուն հայ կա՝ բոլորը պարոն են (եւ) ինքնիշխան:

Այնտեղից գնացի Զամոսցա քաղաք մեջը հայ շատ կա. բոլորովին հարկ չեն վճարում, անկախ պարոններ են: Այնտեղից գնացի Գրյայքով քաղաքը, որ Լե(հ)ի թագավորանիստն է: Այնտեղից՝ Վարշով քաղաքը, այնտեղից գնացի Դանձկա քաղաքը, (որ) նավահանգիստ է: Այնտեղից անցա Ալայմանա(6) երկիրը, Փառակա(7) քաղաքը, որ գահերեց թագավորի աթոռանիստ է: Այնտեղից՝ Դելիյանա(8) երկիրը, Վենետիք քաղաքը: [Սա] ԺԲ /12/ մեծ պարոնի ձեռքին է, ուր Ս.Մարկոս ավետարանչի մարմինն է. ծովի մեջ է. ՁՌ/6000/ կամուրջ կա [եւ]՝ ՁՌ/6000/ ջրանցք: Խիստ մեծ քաղաք է:

Այնտեղից գնացի Եանքուայա(9), այնտեղից՝ Հռոմ քաղաք, [ուր] եւ Ս.Պողոսի, Ս. Պետրոսի մարմինն է, Պապի աթոռը: Շատ սրբոց մասունք կա: Այստեղից անցա Էանաբլի(10) քաղաքը, որ թագավորանիստ է, այնտեղից՝ Ճիճիվա(11) երկիրը, [որ] ծովի մեջ է, թագավորանիստ, պալատ է, իր մեջ ՁԵԿ/660/(12) քաղաք եւ գյուղ: Այդ բոլորը ՁԵԿԵ/665/ աղաճ է(13): Լավ քրիստոնյաներ են(14), հայոց ազգին շատ են սիրում:

Այնտեղից նավով անցա Մալթա երկիրը, ծովի մեջ է, սուրբ Ովանեսի խաճվերցին(15) : Կ/60/ պարոնի տիրույթ է:

Այնտեղից ծովով գնացի Փլորենցա երկիրը, մեծ պարոն է նստում: Այնտեղից գնացի Լուքա քաղաքը. ԺԲ պարոն է նստում: Այնտեղից՝ Միլեան քաղաքը, այնտեղից՝ Իսպանիա՝ Մատրիլ քաղաքը՝ Իսպան (16) մեծ թագավորի գահն է, անունը թագավորի Փիլիբ [է] (17): Թագավորն իր ձեռքի տակ ունի ԺԱ/11/ իշխանություն: Նաեւ ԺԵ /15/ մեծ պարոն կա երկրում: Ա՛մբողջը իր (թագավորի-Ա.Մ) ձեռքի տակ է: Տարեկան ծ/50/ միլիոն կարմիր փիլորի(18) եկամուտ ունի, մեկ ժ/10/ դիբա մետաքս՝ ՃՌ/100000/ փիլորի(19):

Այնտեղից ծովով անցա Ինկլիզաց երկիր: Լուբրյան Ինկլիզաց երկրի մայրաքաղաքն է: [Այնուհետեւ անցա] Դենմարքա երկիրը, Իշկոցաց երկիրը(20), Շիվեցաց երկիրը. Դ/4/ թագավորի երկիր է: Քրիստոսին են հավատում, ծնունդը, Չարչարանքը, Խաչելությունը, Համբարձումը(21), բոլոր երեխաներին կնքում են, մեռոն չունեն: Երեխային կնքելու են տանում եկեղեցին: Երեցը Գ /3/ անգամ ասում է՝ «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյ»: Սուրբ Պատարագին չեն հավատում, Քրիստոս մեկ անգամ խաչ ելավ՝ բոլորը դրան հավատում են(22): Սուրբ Մարիամից, սրբերից բարեխոսություն չեն խնդրում, երեսները չեն խաչակնքում: Պանդուխտներին խիստ հարգանք են տալիս:

Քրիստոս Աստծու ծնունդին ԺԵ/15/ օր Ութօրէք են պահում, չեն աշխատում, ուտում-խմում են, ուրախություն անում:

Այնտեղից գնացի Փառանց երկիրը՝ Փարիզ քաղաքը, որ թագավորանիստ է(23):

…Անաբոլու երկիրը մի թագավորի տիրույթ է(24): Իսպանու երկիրը. Գատալնա ուրիշ թագավորություն է: Արայգոնա եւս մեկ թագավորություն է: Վելենցիա ուրիշ թագավորություն է: Իզբոնա(25) ուրիշ թագավորություն է: Ակրյանատն(26) ուրիշ թագավորություն է:

Նոր Հին[տ]իստան նավով ծովով Ձ/6/ ամսում են հասնում, մեկ տարում Կիկյա թագավորություն են բերում ԼԵ /35/ միլիոն ոսկի-արծաթ մեկ միլիոնը՝ ճ/100/ անգամ [ավելի] ՃՌ /100000/ կարմիր փիլորի է: Քաստիլիա ուրիշ թագավորություն է, որ թագավորը նստում է(27): Միլյանա երկիրը ուրիշ պարոնություն է: Մաճորքա(28) ուրիշ պարոնություն է: Մինորքա ուրիշ պարոնություն է: Բիսկայան ուրիշ պարոնություն է: Կալիցիա ուրիշ պարոնություն է: Սուրբ Ակոբի գերեզմանն է: ԺԱ /11/ թագավորի երկիր է. մեծ պարոնի երկիր է: Ամբողջ Իսպանիան մեծ թագավորի ձեռքի տակ է: Տարին Ծ/50/ միլիոն ոսկի եկամուտ ունի, մեկ միլիոն անգամ ժ /10/ - ՇԺՌ /510000/ փիլորի է(29)… հայոց ազգին շատ են սիրում: Փռանցա ուզկա(30) թագավորություն է: Ալայմանն գահերեց թագավորություն է: Լենհա երկիրը ուզկա թագավորություն է: Տենմարք ուզկա թագավորություն է: Միսգոքն(31) ուզկա թագավորություն է: Իլգոցն(32) ուզկա թագավորություն է: Ինկլեզն ուզկա թագավորություն է: Վենետիկն ինքնակալ պարոնություն է: Փիլորենցա ինքնիշխան պարոնություն է: Մանթով ուրիշ պարոնություն է: Ռոբինն ուրիշ պարոնություն է: Դուքն Սավեն ուրիշ պարոնություն է: Հռոմ Սուրբ Պետրոսի, Սուրբ Պողոսի գերեզմանն է: Պապի նստավայրն է:

«Արաքս»,
Հայ-բասկյան միջազգային
գիտական հանդես,
1997, 2

ՓԻՐԶԱՏ ՂԱՓԱՆՑԻ

ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծանոթագրություններ

1. Որոտնա ձոր:
2. Գետաթաղը գյուղ է Սիսիանից մոտ 15կմ արեւելահարավ:
3. Բնագրում՝ ասկական: Բոլոր ուսումնասիրողները հակված են կարդալու՝ աստանդական:
4. Ադրիանապոլիս, Էդիրնէ:
5. Մոլդովա:
6. Գերմանիա:
7. Պրագա, Պրահա:
8. Իտալիա:
9. Անքուա, Անկուա, Անգուա:
10. Նեապոլ:
11. Սիցիլիա:
12. Ըստ ձեռագրացուցակի՝ «կարելի է կարդալ ՁԵԻ»(620):
13. Աղաճը տարածական չափ է: Ֆրանսերեն թարգմանիչը այս եզրույթի դիմաց ունի lieues/լյէ/, որ մոտավոր թարգմանություն է եւ ընդունելի է իբրեւ ուշ միջնադարի չափի միավոր: Ղ. Ալիշանը («Սիսական», էջ 221) բացատրել է՝ մղոն: Աղաճի մասին կարող ենք որոշ պատկերացում կազմել Զաքարիա Ագուլեցու «Օրագրութիւն»-ից (Երեւան,1938): «Դարձեալ, այս մանձիլներս, որ գրած եմ, կարդում ենք այդտեղ, էջ 6-7,-ոմն սհաթ (ժամ-Ա.Մ) է գրած, ոմն աղաճ: Մին աղաճ ճանապարհն ուղտն Բ/2/ սհաթ գնայ: Բ սհաթէն ճանապարհն ուղտով՝ մին աղաճ ճանապարհ է: Սիոխանէն, թէ՛ ուղտ, թէ՛ ձի այս գրածէս որ թէ կամաց գնայ կամ վռազ՝ դադարով», եւ բերում է բազմաթիվ բնակավայրերի հեռավորությունը, որ իր չափումներով գիտե: Ըստ այդմ Ագուլիսից Նախիջեւան 3 աղաճ է, Արցախ՝ 4, Երեւանի բերդից էջմիածին՝ 1 աղաճ: Ուստի կարելի է եզրակացնել, որ աղաճը մոտավորապես 20 կիլոմետր է: Վերեւում հիշատակված մանձիլը եւս . 1 ժամվա ճանապարհ է, նշանակում է նաեւ հանգրվան, փոստակայան:
14. Բնագրում քիրսոնէ՛ք:
15. Կարծում ենք՝ եթե լինի Խաչվերացին, ինչը որ առաջին հայացքից կարող է ակնհայտ թվալ, կլինի անիմաստ: Ղ. Ալիշանը բացատրել է՝ խաչակիր ասպետք: Հնարավոր է, որ իրոք խոսքը այդ անունով (Ս.Հովհաննես) խաչակրաց մի կարգի մասին լինի:
16. Բնագրում՝ Իստան. պետք է կարդալ դարձյա՞լ Իսպանիա:
17. Ըստ երեւույթին պետք է կարդալ Փիլիբ Երկրորդ:
18. Փիլորի-ֆլորին: Այս եւ ուրիշ դեպքերում Փիրզատը հարազատ (Սյունիքի) բարբառին հարմարեցնելով՝ եվրոպացիների ֆ-ն. մշտապես գրադարձել է փ: Իտալական ուշ միջնադարյան դրամական այս միավորը Ա.Հովհաննիսյանը պարզապես թարգմանում է՝ ոսկի (տե՛ս նշվ. աշխ., էջ 77):
19. Փլորիա-հավանաբար նույն փիլորին է: Այստեղ, ըստ ձեռագրացուցակի, խոսվում է նաեւ Նոր Հնդկաստանի մասին, որ Իսպանիայից վեցամսյա ճանապարհ է եւ որտեղից 35 միլիոն ոսկի է ստացվում: Այս հաշվարկը մտնում է ընդհանուր թվի մեջ /50 մլն/: Փիրզատը նկատում է նաեւ, որ Փիլիբ թագավորը «աղէկ քրիստոնեայ» է եւ, «հայկական ազգն խիստ կուզի» (հմմտ. Ա.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 77):
20. Սկովտիա՝ ըստ Ղ.Ալիշանի («Սիսական», էջ 221):
21. Բնագրում՝ Հորձումն:
22. Բնագիրն անհստակ է. Քրիստոս «մէկ դիրբայ քաչ ելաւ: Բոլորը սորա որոց են հաւատում» Հետեւել ենք իմաստին:
23. Տիրայր վարդապետը գրում է, թե այստեղ վերջանում է «ճանապարհորդական ուղետետրը: Սորան է վերաբերվում նաեւ 2a նկատողութիւնը - «Փորվէցիայ, սայ լուբայ. շարապշէֆ. Ինկլիթռայ (Angleterre). Ճինտումն Ալաքսանդրու». - եւ միւս էջի վրայ, որ վերին մասին շարունակութիւնն է (տե՛ս վերը & 7ա): - Այսպիսով այս համառօտ յուշերն ամբողջ 21 տարուայ ճանապարհորդութեան կէտերն են կազմում (1586-1607)»: Բայց ձեռագրի մի այլ մասում (թղ. 64ա-68ա), ազատ տեղ գտնելով Փիրզատը շարունակում է գրառումները, որոնց մասին Տիրայրը գրում է. «Այլ ճանապարհորդական նկատողութիւններ իւր. տեսած ու այցելած երկրների մասին»: Բնագրի այս մասն անտիպ է:
24. Նեապոլ: Սույն հատվածը ավելի շատ վաճառականական գրառումների տպավորություն է թողնում: Ենթադրելի է, թե նշված բոլոր վայրերում չէ, որ եղել է Փիրզատը: Մասնավորապես այդ է հուշում Նոր-Հնդկաստան-Ամերիկայի հիշատակումը: Ըստ երեւույթին այդ տարիներին Իսպանիայում սիրում էին խոսել նոր հայտնաբերված այդ երկրի առասպելական հարստությունների մասին, եւ հայ ուղեգիրները չեն կարողանում հրաժարվել այդ մասին ուրիշներից լսածը պատմելու գայթակղությունից (հմմտ. Աբեղայի Ուղեգրությունը՝ «Արաքս, 1996, N1, էջ 37):
25. Լիսբոն, Լիսաբոն:
26. Տիրայր վարդապետը գրել է՝ Գրանատա:
27. Ձեռագրում տեղ է թողած հետագայում լրացնելու համար, եւ մնացել է պարապ:
28. Մալյորկա:
29. Բնագրում՝ աղէկ եստոնայ, բաց ենք թողել որպես անհասկանալի բառակապակցություն: Նշված թիվը՝ անհասկանալի: 10 միլիոն ոսկին հավասար է 510000 ֆլորինի՞:
30. Բառս հանդիպում է երեք գրությամբ՝ *ուզկա, ոզկա, ուզգա*: Հավանաբար նշանակում է կախյալ իշխանավոր՝ վասալ: Սա հակակնիշն ենք համարել էրքայ բառի, որ ընկալում ենք իբրեւ եվրոպական սյուզերենի հոմանիշ: *Էրքայ թագաւորի թախտն այ* կապակցությունը ֆրանսերեն թարգմանելիս մեզ հետաքրքրող բառը բաց են թողել, «ou est (Պրահան) la residenca du roi» («Բազմավէպ» էջ 314): Ոսկա՝ միջին հայերեն նշանակում է «այժմ», թերեւս սա՞ է ճիշտ:
31. Թերեւս Մոսկովն:
32. Տիրայր վարդապետը գրել է՝ Scot, հասկանալով, անշուշտ, Սկովտիան (Շոտլանդիա):

Ð²ðò²¼ðàôÚò Ð²Ø²ðÆÜ

Ինչո՞վ է պայմանավորված զարնանային զորակոչի անդրանիկ հավաքի ուշացումը

Սկիզբը՝ էջ 1

կապում եմ զանգվածային լրատվամիջոցների քարոզչության, հասարակական կազմակերպությունների աշխատանքի, ընտանիքի հետ:

– Քանի որ խոսվեց դպրոցի մասին, ավարտենք թեման հարցով՝ արդյո՞ք Ձեզ բավարարում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասագիրքը, առարկայի դասավանդման դրվածքը:

– Դասագրքի բովանդակությունն ինձ բավարարում է, այլ խնդիր է, թե այդ գիրքն ով է օգտագործում: Կարող է նույն թեման ընթերցեն երկու մարդ, եւ յուրաքանչյուրը յուրովի ընկալի ու մեկնաբանի դա: Մեկը գործնականում այդ թեման կարող է կիրառել մի ձեւով, մյուսը՝ մի այլ ձեւով: Սա է խնդիրը: Դասագիրքը հրապարակի վրա է, համապատասխանում է ժամանակակից պահանջներին, խնդիրը դպրոցի եւ զինղեկի վերաբերմունքն է առարկայի եւ դրա դասավանդման հանդեպ: Եվ ընդհանրապես դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակությունը պատշաճ մակարդակի վրա պիտի լինի: Անչափ կարեւոր է այն հանգամանքը, թե պատանին ինչ մթնոլորտի մեջ է ձեւավորվում եւ ինչ արժեհամակարգի մեջ հասակ առնում:

– Բժշկական հանձնաժողովի զննումների արդյունքում արտացոլվում է զինակոչիկների հիվանդացության պատկերը: Ո՞ր հիվանդություններն են առավել տարածված հայրենիքի ապագա պաշտպանների շրջանում: Բավարար չափով բացահայտվո՞ւմ եւ ախտորոշվո՞ւմ են այդ հիվանդությունները:

– Բավականին մեծ տոկոսով բացահայտվում են, բայց լինում են հիվանդություններ, որոնց մասին ոչ միայն ծնողները, այլեւ զինակոչիկները տեղյակ չեն լինում: Բժշկական հանձնաժողովը հայտնաբերում է հիվանդություն, որն անակնկալ է լինում զինակոչիկի ծնողի համար: Լինում են դեպքեր, երբ զինակոչիկը խուսափում է հիվանդության մասին հայտնել ծնողին: Լինում է այնպես, որ հիվանդությունը բավականին ուշ է հայտնաբերվում, եւ բանը հասնում է վիրահատական միջամտության կամ տեւական բուժման: Այս զորակոչին փոփոխություն է կատարվել, վերջին տարիներին, զինակոչիկների շրջանում սիրտանոթային հիվանդությունների աճով պայմանավորված, ատամնաբույժի պարտականությունը կատարում է քիթ-կոկորդի մասնագետը, իսկ ատամնաբույժի հաստիքը հատկացրել են սրտաբանին: Եղավ մի պահ, երբ Կապանի եւ Գորիսի բժշկական կենտրոնները կառավարության որոշմամբ զրկվեցին հետազոտություն կատարելու իրավունքից, այս զորակոչից արդեն որոշ ախտորոշումներն իրականացվում են նշված բժշկական կենտրոններում: Սա ոչ միայն նախազինակոչային եւ զինակոչային պատանիների ընտանիքների հոգսը որոշակիորեն թեթեւացնում է, այլեւ նպաստում է պատանիների կցագրման պրոցեսին, նախազինակոչային տարիքի պատանիների առողջական վիճակի գնահատման, եղած շեղումները վաղ շրջանում հայտնաբերելու առումով: Երբեմն հետազոտության համար 15-ամյա պատանուն պիտի ուղարկենք Երեւան: Տեղում էլ որոշ հետազոտություններ են արվում, եւ կարողանում ենք զինակոչիկի անձնական գործում ճիշտ գրանցում կատարել: Բայց հիմնականում կարեւոր բուժզննումներն իրականացվում են մայրաքաղաքում:

– Իսկ հնարավոր չէ՞ այդ ամենը մարզում իրականացնել, քանի որ ծախսերի հետ է կապված:

– Բժշկական մասնագիտական խմբեր հնարավոր է հրավիրել, բայց բժշկական նորագույն սարքավորումներ կան, որոնք միայն մայրաքաղաքում են առկա, եւ դրանք դյուրին չէ (եթե ոչ անհնար) տեղափոխել մարզեր: Բայց այլ ելքեր կան: Կարծում եմ՝ սիրտանոթային արատներ ունեցողներին կարելի է հետազոտել Գորիսի նորաբաց սրտաբանական կենտրոնում: Եթե չեմ սխալվում, մինչեւ անցյալ տարի Մեղրիում ֆլյուրոգրաֆիական ապարատ չկար, մարդն իր թոքերը ստուգելու համար պիտի հասներ Կապան: Ես այդ մասին բարձրաձայնել եմ մի 5-6 տարի առաջ: Բայց այդ ապարատը ոչ միայն զինակոչիկների, այլեւ Մեղրու տարածաշրջանի բնակչության հետազոտության համար է հարկավոր:

– Ցավոտ խնդիր է շարունակում մնալ բուժզննման նպատակով մայրաքաղաք մեկնող զինակոչիկներին անհրաժեշտ գումարով ապահովումը:

– Այդպես է, զինակոչիկին հատկացնում ենք վեց հազար դրամ՝ գնալ-գալու համար: Այն հիվանդանոցը, ուր գործուղվում է զինակոչիկը, պարտավոր է նրան ապահովել գիշերելու տեղով եւ սննդով, իսկ այդ նպատակով հատկացվում է 700 դրամ՝ մեկ օրվա համար, ինչպես ասում եմ՝ մեկնաբանություններն ավելորդ են:

– Անցնենք զորակոչին առնչվող մի կարեւոր խնդրի. գարնանային այս զորակոչից խուսափողներ կա՞ն, եւ ի՞նչ է ձեռնարկվում նախորդ զորակոչերից խուսափողների հանդեպ:

– Խուսափողներ, բնականաբար, կան: Կոնկրետ այս զորակոչից խուսափողներն այն պատանիներն են, ովքեր վաղ տարիքում ծնողների հետ տեղափոխվել են արտերկիր: Բայց կան այնպիսիք, ովքեր վերադառնում են: Եթե մարդ ծնվել է Հայաստանում եւ արտերկրում (կոնկրետ՝ Ռուսաստանում) դժվար է այդ երկրի քաղաքացիություն ստանալ (խոսքը նախեւառաջ զինակոչային տարիքի պատանու մասին է), ապա ճարահատյալ վերադառնում է Հայաստան՝ ծառայելու բանակում, որպեսզի զինգրքույկ եւ անձնագիր ստանա: Կոնկրետ այս զորակոչին Ռուսաստանից երեք հոգի եկել են ծառայելու: Այլապես խնդիրներ են ունենում տվյալ երկրի իրավապահ մարմինների ու այլ կառույցների հետ:

– Իսկ նախորդ զորակոչերից խուսափողներ շատ կա՞ն, թե՞ դա գաղտնիք է:

– Որեւէ գաղտնիք չկա, շատ են, բայց այդ շատի մեջ մի մասի 27 տարեկանը լրացել է, նրանք այլեւս զորակոչի ենթակա չեն:

– Իսկ կա՞ն այնպիսիք, ովքեր վերադառնում եւ սահմանված գումարը՝ յուրաքանչյուր զորակոչի համար 100 հազար դրամ մուծելով՝ ազատվում են քրեական պատասխանատվությունից:

– Այո՛, այդիսիք էլ կան: Այդ հարցը կարգավորվում է «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքով:

– Տարեկան մի քանի անգամ անցկացվում են վարժահավաքներ: Ի՞նչ դժվարություններ կան այդ ոլորտում: Հաջողվո՞ւմ է Ձեզ կազմակերպված անցկացնել դրանք:

– Բնականաբար, ոչ մեկը չի գալիս հոժարակամ, թե՝ ես գնում եմ վարժական հավաքի: Բայց բոլորը պիտի մասնակցեն դրանց, որովհետեւ մեր ժողովրդի խաղաղությունը դրանով է պայմանավորված, իսկ ով խուսափում է վարժական հավաքից, կնշանակի նա չի սիրում իր հայրենիքը, ընտանիքը: Ի՞նչն է խանգարում զինապարտին, որ նա մեկ-երկու օրով մասնակցի վարժահավաքի: Կարծում եմ՝ տարրական պատասխանատվության բացակայությունը: Կցանկանայի, որ համայնքի ղեկավարները, համատիրության նախագահները վարժահավաքների խնդրում անհրաժեշտ սրտացավություն դրսեւորեն, նաեւ գիտակցեն, որ յուրաքանչյուր վարժահավաք մեր տարածաշրջանում խաղաղության ամրապնդման հավելյալ գրավական է:

– Իսկ ի՞նչ կասեիք պայմանագրային զինծառայության մասին:

– Այդ մասին կարեւոր եմ համարում խոսելը, քանզի մենք պարտադրված ենք գնալ պայմանագրային զինծառայության՝ ելնելով մեր զորակոչային ռեսուրսների սակավությունից: Այս ոլորտում էլ կան խնդիրներ: Կարծում եմ՝ ժամանակի հետ դրանք կլուծվեն, քանզի սոցիալական բնույթի են՝ աշխատավարձ, կենցաղային ոչ բարվոք պայմաններ եւ այլն: Ըստ իս՝ պայմանագրային զինծառայողը, ով մարտական հերթապահություն է իրականացնում դիրքերում, համոզված պիտի լինի, որ իր թիկունքում ընտանիքն ապահովված է, հանապազօրյա հոգսերը հասցված են նվազագույնի:

– Նաեւ զինկոմիսարիատների վրա՞ է դրված ռազմական ուսումնարանները կադրերով ապահովելու խնդիրը:

– Ցավոք, ռազմական ուսումնարաններում սովորել ցանկացողների թիվը գնալով նվազում է: Կար ժամանակ, երբ 25-30 պատանի էինք շրջանից տանում մայրաքաղաք, նույնիսկ մի ավտոբուսը չէր բավականացնում, իսկ հիմա… Այս խնդրում ամենաստույգ քարոզչությունն այն է, որ հասարակությունը տեսնի, որ զինվորականի ընտանիքը բարեկեցիկ կյանքով է ապրում, գտնվում է պետության հոգածության ներքո, զինվորականը հասարակության մեջ հարգանք ու պատիվ ունի:

– Մասնագիտության բերումով մշտապես հետեւում ենք աշխարհի անցուդարձին, օրվա լուրերի թողարկումներին, մի քիչ շատ չէ՞ պատերազմի քարոզը մեզանում: Անընդհատ, ամեն օր հիշեցնում են (եթե ուրիշ մեկը չհիշեցնի, «Հայլուր» լրատվական ծրագիրը հիշեցնում է), որ իրավիճակը սահմանում լարված է, որ Ադրբեջանը հոխորտում է: Անընդհատ, կարծեք, հիշեցնում են, որ մեզ պատերազմ է սպասվում:

– Ես միանշանակ ասում եմ՝ նման գործելակերպը սխալ է: Մենք ոչ թե պիտի խոսենք, մենք պետք է մշտապես պատրաստ լինենք պատերազմի: Առանց այդ մասին տարփողելու կամ պարզապես հիշեցնելու: Այսպիսի մի ձեւակերպում կա, չէ՞, եթե ուզում ես խաղաղություն, պատրաստվիր պատերազմի: Եթե մեր հակառակորդը մի քանի տարի առաջ պատերազմի մասին մեզ նախազգուշացնում էր, ապա հիմա բացահայտորեն պատերազմը վերսկսելու սպառնալիքներ է տեղում: Մենք պիտի պատրաստվենք գիշեր-ցերեկ, ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան: Դա պիտի լինի պետական քաղաքականության եւ քարոզչության մի բաղկացուցիչ մասը: Եթե մի օր մեր երկրին վտանգ սպառնա, մենք պիտի ազգովին պատրաստ լինենք: Սա է խնդիրը:

– Եվս մի հարց է մեզ հուզում: Մի քանի օր առաջ նշվեց հաղթանակի եւ խաղաղության տոնը: Ձե՞ք կարծում, որ այդ հաղթանակի եւ խաղաղության ու Շուշիի ազատագրման տոնակատարություններն իրարից պիտի առանձնացնենք: Ինչքան էլ նույնացնենք, դրանք նույնը չեն: Խառնվում են մեծ հաղթանակի օրը եւ Շուշիի ազատագրումը: Դրանք մեր պատմության տարբեր ժամանակաշրջանների իրադարձություններ են նշանավորում, գուցե դրանք առանձնացնե՞նք:

– Մայիսի 8-ին մասնակցում էի Մեղրու սահմանապահ ջոկատի միջոցառմանը: Նաեւ ելույթ ունեցա եւ այն միտքը հայտնեցի, որ Ձեր նշած երկու իրադարձությունը պարզապես զուգադիպել են: Նաեւ բանաստեղծական տողեր հիշեցրի. «Եթե նորից մրրիկ բարձրանա, մայիսի 9-ով պիտի վերջանա»: Գուցե այդ զուգադիպման մեջ դեր խաղաց այն հանգամանքը, որ Շուշիի ազատագրումը ձեռնարկած զորահրամանատարները՝ Կոմանդոսը (Արկադի Տեր-Թադեւոսյան), պաշտպանության ներկայիս նախարար Սեյրան Օհանյանը, այլ զորահրամանատարներ, ռազմական այդ օպերացիան հենց մայիսի 8-ին են նախատեսել սկսել, նաեւ աչքի առաջ ունենալով, որ հայերիս համար մայիսը հաղթանակների ամիս է, Բեռլինում Գերմանիայի կապիտուլյացիայի փաստաթուղթն էլ ստորագրվեց մայիսի 8-ին, մայիսի 9-ին պարզապես տոնում էին հաղթանակը: Բայց այդ երկու իրադարձությունը համատեղելը լավագույն տարբերակը չէ: Իմ խոսքում ես ասացի, որ փաստորեն հակառակորդը ցանկանում էր մեզ հիշեցնել ապրիլի 24-ը, մենք էլ ցանկացանք ապացուցել, որ կարող ենք հաղթել մայիսի 9-ին, քանի որ այդ հաղթանակի օրը մեր մեջ ամուր է նստել:

– Նորից դառնանք զորակոչի թեմային: Բնականաբար, Դուք պատասխանատվություն չեք կրում բանակում ծառայող զինվորի համար, բայց, այնուամենայնիվ, զինկոմիսարիատ-զորամաս կապը գործո՞ւմ է: Տեղեկություն ունե՞ք, թե ինչպես է ծառայում Կապանի զինկոմիսարիատից զորակոչված զինվորը:

– Զինկոմիսարիատը շնորհակալական նամակներ է ստանում որոշ զինվորների օրինակելի ծառայության մասին, եւ, հակառակը, լինում են դեպքեր, երբ որոշակի հանցանքների համար զինվորը դատապարտվում է, այդ մասին էլ ենք տեղյակ լինում: Կամ էլ, երբ բանակում զինվորը որեւէ խնդիր է ունենում, ծնողը մեզ է դիմում, գտնում ենք զորամասի հրամանատարի հեռախոսահամարը, փորձում օգտակար լինել: Այսքանը:

Վերջում կուզեի հավաստիացնել, որ Կապանի զինկոմիսարիատը, մարզային եւ տեղական իշխանությունների, իրավապահ մարմինների հետ համագործակցած, հնարավորինս ամեն ինչ անելու է հանրապետության զինկոմիսարիատի կողմից իջեցված պլանառաջադրանքը կատարելու համար, իսկ զորակոչված երիտասարդներին մաղթում եմ խաղաղ ծառայություն եւ բարի վերադարձ:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ԱՅՑԵՔԱՐՏ

Լեոնիդ Գրիգորյան. ծնվել է 1963թ. նոյեմբերի 3-ին Քաջարան քաղաքում: 1970թ. ընտանիքով տեղափոխվել է Կապան, որտեղ էլ հաճախել է Շահումյան բանավանի դպրոցը: 1978-ին 8-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել է Կապանի շինարարական տեխնիկում: Ավարտելուց հետո 1982թ. զորակոչվել է ԽՍՀՄ զինված ուժեր եւ ծառայել ԳԴՀ-ում տեղակայված զորքերում, սկզբում՝ պարտադիր ծառայող, այնուհետեւ՝ պայմանագրային զինծառայող՝ ենթասպայի կոչումով՝ ավտոմոբիլային դասակի հրամանատար, մինչեւ 1988 թվականը: Ապա ծառայել է Լենինգրադի զինօկրուգում՝ զենիթահրթիռային գնդի դասակի հրամանատար: 1989-ին իր դիմումի համաձայն զորացրվել է խորհրդային բանակից եւ նույն թվականին ընդունվել աշխատանքի «Կապանտուրիստ» կոոպերատիվում ու մասնակցել Կապանի սահմանը պաշտպանող ջոկատների ձեւավորմանը: 1991թ. ընդունվել եւ 1996-ին ավարտել է Երեւանի տնտեսահիրավագիտական ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետը: 1991թ. նոյեմբերի 1-ին զինվորական կոմիսարիատի առաջարկով ուղարկվել է ՀՀ ՆԳ Կապանի պահպանության բաժնին կից նոր կազմավորված հրաձգային գումարտակ՝ դասակի հրամանատար: Հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ գումարտակի կազմում մասնակցել է Կապանի սահմանների պաշտպանության մարտական գործողություններին: 1993թ. հունիսի 1-ից իր դիմումի համաձայն տեղափոխվել է Կապանում նոր կազմավորված ՊՆ 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադ եւ նշանակվել 1-ին գումարտակի շտաբի պետի տեղակալ, այնուհետեւ 1993թ. հոկտեմբերի 10-ին նշանակվել նույն գումարտակի հրամանատար: Գումարտակի կազմում մասնակցել է Կապանի շրջանի եւ հարավարեւելյան ուղղությամբ մարտական գործողություններին, 1994թ. հունվարի 23-ին ծանր վիրավորվել է: Առողջությունը վերականգնվելուց հետո շարունակել է ծառայությունը: 1994թ. դեկտեմբերի 8-ին նշանակվել է 97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի հրամտեղակալ մարտական պատրաստության գծով եւ ակտիվորեն մասնակցել բանակաշինության գործընթացին: ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով 1996թ. հունվարի 26-ին նշանակվել է ՀՀ Կապանի զինվորական կոմիսար, որտեղ ծառայում է առ այսօր: Պարգեւատրվել է կառավարական, գերատեսչական եւ հասարակական կազմակերպությունների մեդալներով, բազմաթիվ պատվոգրերով եւ շնորհակալագրերով: Ամուսնացած է՝ ունի երկու որդի եւ մեկ դուստր, մեկ թոռ:

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՈՒՐԲԱԹ • 24 ՄԱՅԻՍԻ 2013Թ • № 13 (286)

ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «2013-14 ուստարում մարզում փակվող դպրոց չի լինի»

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 2

Քննություններին նախապատրաստվելու համար, որպես աջակցություն, մարզի դիմորդներին Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության կողմից անվճար բաժանվել են ուղեցույցներ: Նրանց տրամադրվել են նաեւ ԵՊՀ-ի կողմից ուղարկված «Դիմորդ-2013» ձեռնարկները: Հայտնի է նաեւ քննության ժամանակացույցը: Անց է կացվելու գիտելիքների ստուգում 4-րդ դասարանում (1483 աշակերտ), 9-րդ դասարանում՝ ավարտական քննություններ (1472 աշակերտ), իսկ 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններ: Նրանք, ովքեր պատրաստվում են ընդունվել բուհ, իրենց նախընտրած առարկաների համածայն կհանձնեն միասնական ավարտական քննություններ:

– Դիմորդները փաստաթղթերը մինչեւ ե՞րբ կարող են հանձնել բարձրագույն ուսումնական հաստատություններ:

– Մայիսի 6-ից ՀՀ բուհերում սկսվել է դիմորդների փաստաթղթերի ընդունման եւ հայտագրման գործընթացը: Փաստաթղթերի ընդունումը կտեւի մինչեւ հունիսի 1-ը՝ ժամը 18.00-ը: Դիմորդը կարող է հայտագրվել մեկ կամ մի քանի բուհի մինչեւ 2 անվճար եւ 8 վճարովի մասնագիտությունների համար:

– Մեղրու տարածաշրջանի դիմորդներին այս տարի քանի՞ ուղեգիր է տրվել եւ ո՞ր բուհերի համար:

– Ուղեգրեր տրվել են Երեւանի բժշկական համալսարան, Երեւանի Խ.Աբովյանի մանկավարժական համալսարան, Երեւանի լեզվաբանական համալսարան ընդունվելու համար: Գործընթացը չի ավարտվել, նախնական տվյալներով՝ նշված բուհերից յուրաքանչյուրում 2-ական տեղ: Ուղեգրով սովորող ուսանողները բուհն ավարտելուց հետո պարտավոր են վերադառնալ տվյալ տարածաշրջան, իսկ տվյալ հաստատությունն էլ պարտավոր է համապատասխան աշխատանքով ապահովել:

– Հանրակրթության բնագավառում մի ուշագրավ գործընթաց էլ է սկսվել, որը դեռեւս չի ավարտվել: Խոսքը վերաբերում է ուսուցչին տարակարգ շնորհելուն, որի արդյունքում տարակարգ ստացած ուսուցիչը կստանա հավելավճար: Մարզում ունե՞նք նման ուսուցիչ:

– Այդ գործընթացը դեռեւս ընթացքի մեջ է, առայժմ չունենք տարակարգ ստացած ուսուցիչ:

– Հանրապետությունում դեռեւս շարունակվում են դպրոցների կարգավիճակային փոփոխությունները. Սյունիքի մարզում 2013-14 ուստարում կլինե՞ն նման փոփոխություններ:

– 2013-14 ուստարում կարգավիճակային փոփոխություններ չեն սպասվում, փակման եզրին գտնվող դպրոցներ չունենք: Այսօր մտահոգիչ է գյուղական համայնքների դպրոցների հարցը. այստեղ բավականին նվազել է աշակերտների թիվը՝ պայմանավորված տարբեր գործոններով: Օրինակ՝ Արեւիսի միջնակարգ դպրոցում ընդամենը 2 աշակերտ է սովորում, Կապանի գյուղական դպրոցներում 100-ից ավելի աշակերտ ունեցող մեկ դպրոց է՝ Դավիթբեկի միջնակարգ դպրոցը, Սիսիանում՝ 3 դպրոց, Մեղրիում չունենք գյուղական դպրոց, որ 100-ից ավելի աշակերտ ունենա: Աշակերտների թիվը, մինչդեռ, այնքան էլ կարեւոր չէ որակի առումով: Մենք մշտապես լավագույն աշակերտներ ենք ունենում գյուղական դպրոցներից, օրինակ՝ Խնձորեսկի միջնակարգ դպրոցից առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում ունեցել ենք առաջին կարգի դիպլոմակիր: Այս պահին ԿԳ նախարարություն նախագիծ է ներկայացվել Սիսիանի տարածաշրջանում Բալաքի տարրական դպրոցը դարձնել հիմնական: Այստեղ սովորում է 4 աշակերտ, ովքեր տարրական դպրոցն ավարտելուց հետո ստիպված պետք է գնան մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող Շաղաթի միջնակարգ դպրոց, որն այնքան էլ նպատակահարմար չէ: Նախագիծն արդեն ներկայացվել է, եւ, կարծում եմ, որոշումը դրական կլինի:

– Ի՞նչ գործոններ են հաշվի առնվում դպրոցն ավագ, միջնակարգ կամ հիմնական դարձնելիս, եւ արդյո՞ք արդարացնում են ավագ դպրոցները:

– Նախ եւ առաջ հաշվի են առնվում դպրոցի շենքային պայմանները եւ տեղանքը: Կարծում եմ՝ ավագ դպրոցը ժամանակի ընթացքում իրեն կարդարացնի, կհիմնավորվի, եւ ներկայումս եղած որոշ թերություններ կվերացվեն:

– Ավագ դպրոցների նպատակն էր նաեւ վերացնել կրկնուսուցումը, բայց այսօր դեռեւս շարունակում է այդ երեւույթը տարածված լինել:

– Ավագ դպրոցները մարզային ենթակայության չեն, եւ ես չեմ կարող ասել, թե կրկնուսուցումը որքանով է շարունակում գերակայել: Հավանաբար դա պայմանավորված է «մոդային տուրք տալով»: Իմ աշխատանքային գործունեության ընթացքում բազմիցս համոզվել եմ, որ առանց կրկնուսուցման կարելի է ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն: Այն, ինչ երեխան սովորում է դպրոցում, այլեւս ոչ մի տեղ չի սովորելու:

– Մոտ ապագայում ո՞ր դպրոցներում տեղի կունենա տնօրենի թափուր տեղի համար մրցույթ:

– Տնօրենների թափուր տեղի համար մրցույթ է հայտարարվել Կապանի N1 հիմնական, Ներքին Հանդի, Լեռնաձորի, Ծավի միջնակարգ դպրոցներում:

– Նախնական տվյալներով՝ 2013-14 ուստարում քանի՞ առաջին դասարանցի կունենանք:

– Վեց տարին լրացած երեխաները պարտադիր պիտի հաճախեն դպրոց՝ անկախ ֆիզիկական վիճակից: Հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, եթե լրանում է երեխայի 6 տարեկանը, ապա պիտի հաճախի դպրոց: Եթե երեխան ունի մտավոր կամ ֆիզիկական խնդիրներ, ապա պետք է հաճախի հատուկ կամ ներառական դպրոցներ, ինչպես նաեւ, ծայրահեղ դեպքերում, համապատասխան փաստաթղթեր ներկայացնելով՝ կարելի է կազմակերպել տնային ուսուցում: Նախնական տվյալներով՝ այս տարի կունենանք 1684 առաջին դասարանցի, անցնող ուսումնական տարում ունեցել ենք 1502, իսկ 2011-12 ուստարում՝ 1404: Թվերից կարելի է եզրակացնել, որ նկատվում է երեխաների թվի աճ:

– Այսօր հանրակրթության բնագավառում առաջնային է նաեւ բոլոր դպրոցները ներառական դարձնելը: Արդյո՞ք մենք պատրաստ ենք այդպիսի շրջադարձային փոփոխության:

– Ներառական կրթությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցման կազմակերպումն է հանրակրթական եւ մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ: Մարզում որոշ դպրոցներ ներառական ուսուցում են կազմակերպում: Ես կարծում եմ՝ ժամանակի ընթացքում բոլոր դպրոցները կդառնան ներառական, որը մասամբ կիրականանա հատուկ դպրոցների վերակազմակերպմամբ: Երեխան, անկախ իր մտավոր կամ ֆիզիկական արատներից, պետք է ուսում ստանա իր հասակակիցների հետ միեւնույն պայմաններում, եւ կարծրատիպերը, որոնք գոյություն ունեն, կվերացվեն ժամանակի ընթացքում:

– Սյունիքի մարզում կրթությունն այսօր իրականացվում է վեցօրյա աշխատանքային շաբաթով: Չե՞ք կարծում, որ, հատկապես այն դպրոցներում, որտեղ ուսուցիչներն աշխատում են քիչ ժամաքանակով, նպատակահարմար է հնգօրյա ուսուցումը:

– Ըստ ուսումնական պլանի՝ յուրաքանչյուր ուսումնական հաստատություն, մանկավարժական խորհուրդ ինքն է որոշում իր աշխատանքային շաբաթը եւ առնվազն 15 օր առաջ ներկայացնում է ԿԳՆ: Մենք շատ դպրոցներ ունենք, որոնք կողմնակից են վեցօրյա աշխատանքային շաբաթին՝ պայմանավորված ուսուցչի ծանրաբեռնվածությամբ. օրական 7 ժամ իրար հետեւից դաս պարապելն արդյունավետ չի կարող լինել, մյուս կողմից էլ ուսուցիչն ու աշակերտը լիարժեք չեն հանգստանում: Գյուղական դպրոցներում ամեն դասարանում քիչ թվով աշակերտներ են սովորում, եւ այդ երեխան ամեն օր պետք է պատրաստ լինի դասին, որը երբեմն հնարավոր չէ, ուստի այստեղ էլ հնգօրյա աշխատանքային շաբաթը նպատակահարմար չէ: Միանշանակ ասել, թե որն է ճիշտ, հնարավոր չէ: Այս հարցի լուծումը յուրաքանչյուր ուսումնական հաստատություն կարող է տալ յուրովի:

– Այսօրվա սերնդի ուսման որակի հետ կապված ինչպիսի՞ մտահոգություն ունեք:

– Ուսումնական գործընթացն անընդհատ զարգացման մեջ է, եւ բոլոր ժամանակներում էլ լինում են թեր եւ դեմ կողմեր: Այսօրվա երեխաները հրաշալի են, հիանալի են տիրապետում ժամանակակից տեխնիկային, տեղեկատվական դաշտն ավելի ընդգրկուն է: Բայց մտահոգություն կա այն առումով, որ չեն ընթերցում, թեպետ ես պատրաստի դեղատոմս չունեմ այս հարցի լուծման համար: Միայն կարող եմ ասել, որ նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, իր դրական կողմերով հանդերձ, նաեւ բացասական ազդեցություն ունի:

– Շրջանավարտների «Վերջին դասի» կազմակերպման հետ կապված՝ մշտապես շրջանառվում են ասեկոսեներ առ այն, որ դպրոցներում դրամահավաքությունը մեծ ծավալ է ստանում: Ձեր քայլերը նման արատավոր երեւույթների դեմ պայքարելու գործում:

– Այս տարի «Վերջին դասն» անց է կացվում մայիսի 24-ին: Ինչ վերաբերում է դրամահավաքությանը, ապա նախապես հրահանգվել է բոլոր դպրոցների տնօրեններին՝ բացառել պարտադրված դրամահավաքի որեւէ դրսեւորում, ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները՝ մայիսի 24-ին ավարտական դասարաններում կազմակերպվող «Վերջին դաս» միջոցառումը սովորողների համար իրական տոն դարձնելու, միջոցառումները դպրոցին, մանկավարժին եւ սովորողին վայել պահվածքով անցկացնելու համար: Իսկ եթե ինչ-որ միջոցառում կազմակերպվի էլ, ապա միայն ու միայն ծնողական կոմիտեի նախաձեռնությամբ եւ ավարտական քննություններից հետո: Կարծում եմ՝ մեզ կհաջողվի հավուր պատշաճի անցկացնել «Վերջին դաս» միջոցառումը:

– Ձեր բարեմաղթանքը հանրակրթական դպրոցների շրջանավարտներին:

– Ցանկանք մեր շրջանավարտներին ամենալավն ու բարին, ոգու խնդություն, բազում հաջողություններ, բարեբախտություն: Ինչ-որ բանի ավարտ միշտ էլ նորի սկիզբն է, թող այդ օրը հիշարժան ու անմոռանալի լինի նրանց համար: Իսկ այն շրջանավարտներին, ովքեր դպրոցն ավարտելուց հետո կհամալրեն հայոց ազգային բանակի շարքերը, ցանկանք ոգու արիություն ու տոկունություն:

Հարցազրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Ս.Գ. *Լեւոն Մարգարյանից տեղեկացանք, որ ՀՀ քաղաքաշինության խորհրդի կողմից Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնի թափուր տեղի համար նոր մրցույթ դեռեւս չի հայտարարվել, իսկ նրա մասնակցությունը կայանալիք մրցույթին, կարծեք, անհերկբայելի է: Ըստ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռազմիկ Ղազարյանի («Սյունյաց երկիր», N8, 9 ապրիլի 2013թ.)՝ նա կմասնակցի նոր մրցույթին:*

ԱՅՑԵՔԱՐՏ

Լեւոն Մարգարյան. ծնվել է 1958թ. Կապանում: 1964-65 ուստարուց հաճախել եւ 1974-75 ուստարում ավարտել է Կապանի N5 միջնակարգ դպրոցը: 1975թ. աշխատանքի է անցել Զանգեզուրի էլեկտրացանցի Կապանի ցանցային շրջանում՝ բանվոր: 1976-78թթ. ծառայել է բանակում: Զորացրվելուց հետո կրկին աշխատել է վերոհիշյալ ձեռնարկությունում: Առանց արտադրությունից կտրվելու՝ 1981-82 ուստարում ընդունվել եւ 1985-86-ին ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժինը: 1983թ. նշանակվել է ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմի հրահանգիչ: 1986թ. ընտրվել է նույն շրջկոմի երկրորդ քարտուղար: 1989թ. ընտրվել է Սյունիքի խորհրտնտեսության կուսկոմիտեի քարտուղար: 1991թ. նշանակվել է Կապանի N11 ութամյա (1992թ.-ից՝ միջնակարգ) դպրոցի տնօրեն: 2004թ. ընտրվել է Քաջարանի N1 միջն. դպրոցի տնօրեն: 2007թ. նոյեմբերի 27-ին վերընտրվել է նույն պաշտոնում եւ աշխատել մինչեւ 2012թ. օգոստոսի 17-ը: 2012թ. օգոստոսի 17-ից նշանակվել է Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնակատար: Ամուսնացած է, ունի երկու որդի:

Գոմեշի մսի գործի նախաքննությունն ավարտական փուլում է, մեղադրյալը՝ հիվանդանոցում

ՀՀ ՊՆ ՔԾ ՀԿԳ քննչական բաժնի վարույթում ՀՀ ՊՆ պարենային բազայի պահեստում կատարված սպուգումների արդյունքում գոմեշի մսի հայտնաբերման փաստի առթիվ քննվող քրեական գործով 07.05.13թ. որոշում է կայացվել ՀՀ քր. օր-ի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրյալ Ալբերտ Օհանջանյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը փոփոխելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազության տեղեկացմամբ, հաշվի առնելով հանրության հետաքրքրությունը, զինվորական դատախազությունը տեղեկացնում է, որ խափանման միջոցը փոփոխելու մասին որոշման համար հիմք է հանդիսացել այն, որ Ա.Օհանջանյանը տառապում է «շաքարային դիաբետ, արյան շրջանառության սուր անբավարարություն, զարկերակային հիպերտենզիա» հիվանդություններով, գտնվելով կալանքի տակ՝ երկու անգամ սրտի կաթված է տարել եւ տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ ստացիոնար բուժում է ստացել: Բժշկական կենտրոնում նրա մոտ ախտորոշվել է «Ձախ փորոքի առաջային պատի սրտամկանի ստորին սուր ինֆարկտ: Վաղ հետինֆարկտային ստենոկարդիա: Արյան շրջանառության սուր կանգային անբավարարություն: Զարկերակային հիպերտենզիա: Վիճակ կորոնար անոթի ստենդավորումից հետո»:

Այնուհետեւ Ա.Օհանջանյանը տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ, որտեղ, սակայն, հնարավոր չի եղել ապահովել նեղ մասնագիտական բուժում, առկա չեն նաեւ նման հիվանդությամբ տառապող անձանց պարբերական հետազոտման եւ հիվանդության ախտորոշման համար անհրաժեշտ բժշկական սարքավորումները: Մեղադրյալ Ա.Օհանջանյանի կողմից միջոցներ են իրականացվել իր իսկ կողմից պետությանը պատճառված նյութական վնասը վերականգնելու ուղղությամբ:

Բացի այդ մեղադրյալի հետ կապված բոլոր անհրաժեշտ քննչական գործողություններն այս պահին ավարտվել են եւ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալ Ա.Օհանջանյանը չի խոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու կամ այլ ճանապարհով: Վերջին նկատառումներից ելնելով փոփոխվել են նաեւ մյուս մեղադրյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցները:

Քրեական գործի նախաքննությունը գտնվում է ավարտական, դատարան ուղարկելուց առաջ ծեռք բերված ապացույցների վերլուծության, այլ ապացույցների հետ համադրման, գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատման փուլում:

18 մայիսի 2013թ., aravot.am

Գորիսի երկրագիտական թանգարանի փապալումը՝ իրողություն

ՄՇԱԿՈՒՅԹ

Սկիզբը՝ էջ 1

բացվեց Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, թանգարանն իրավացիորեն հանվեց այնտեղից ու տեղափոխվեց եկեղեցու դիմացի (նախկինում՝ պրոֆտեխուսումնարանի, N6 միջն. դպրոցի, ուսումնաարտադրական կոմբինատի, իսկ ավելի վաղ՝ գյուղտեխնիկումի) շենքի նկուղային հարկ, որը շատ թանկ նստեց թանգարանի ցուցանմուշների վրա: 1996-ին թանգարանի կյանքում տեղի ունեցավ եւս մեկ շրջադարձ: Շրջանային խորհուրդների լուծարման, մարզպետարանների ստեղծման կապակցությամբ վերանայվեց նախկինում շրջանային ենթակայության հաստատությունների (հիմնարկների) հետագա կարգավիճակը: Բազմաթիվ թանգարաններ (հանրապետությունում) անցան մարզային կամ հանրապետական ենթակայության, որն ավելի բարեհարմար կարգավիճակ էր ֆինանսական ապահովման, գիտամեթոդական ղեկավարման առումով: Սյունիքի մարզի հնագույն եւ ամենահարուստ թանգարանը, սակայն, հանձնվեց Գորիսի տեղական ինքնակառավարման մարմնին՝ քաղաքապետարանին (Կապանի երկրագիտական թանգարանին վերապահվեց մարզային, Սիսիանի Ն.Ադոնցի անվան պատմության թանգարանին՝ հանրապետական ենթակայության կարգավիճակ): Գորիսի քաղաքապետարանն էլ, լավ չպատկերացնելով թանգարանի դերն ու նշանակությունը մշակութային կյանքում, հետագայում թանգարանին զրկեց իրավաբանական անձի կարգավիճակից ու դարձրեց Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակութային կենտրոնի մի բաժին: Այդ կարգավիճակով էլ մինչ օրս գործում է (եթե, իհարկե, գործում է): Դրանով, սակայն, չավարտվեց թանգարանին պատուհասած արհավիրքների շարքը: Թանգարանը զրկվեց գիտամասնագիտական ղեկավարումից: Թանգարանի ղեկավարումը հանձնվեց թանգարանի գիտաշխատող Վարդան Սարգսյանին, ում թույլատրվեց համատեղությամբ աշխատել քաղաքի հանրակրթական դպրոցներից մեկում, իսկ ավելի ուշ՝ նաեւ Ակսել Բակունցի տուն-թանգարանի տնօրեն: Թեեւ մասնագիտությամբ պատմաբան է, մի քիչ էլ թանգարանային աշխատանքի փորձ ունի եւ լավագույնս պատկերացնում է հնագիտական ու ազգագրական իրերի (առարկաների) շուկայի միտումները, բայց Ա.Բակունցի տուն-թանգարանի տնօրեն նշանակվելուց հետո այլեւս ժամանակ չունեցավ զբաղվելու երկրագիտական թանգարանի գործերով՝ մնալով այդ թանգարանի գիտաշխատող ու փաստացի ղեկավար: Ամեն ինչ թողնվեց թանգարանի ֆոնդապահի եւ երկու հսկիչի հայեցողությանը… Մինչ այդ՝ 2002-ին, թանգարանին նոր տեղ հատկացվեց քաղաքի մշակույթի կենտրոնի առաջին հարկի հետնամասում: Իբր թանգարանի շենքային պայմանների բարելավմանը միտված այդ քայլը, սակայն, ոչ միայն չթեթեւացրեց թանգարանի հոգսերը, այլեւ նոր խնդիրներ առաջ բերեց: Մշակույթի կենտրոնի այդ հատվածի ոչ արեւահայաց (գրեթե նկուղային) դիրքը, գետնի մակերեսից ոչ բարձր լինելը, սալապատված հատակն ի սկզբանե խոնավության աղբյուր էին՝ թանգարանային պայմաններին հակացուցված: Ուստիեւ այնտեղ գիտական ու ազգագրական մեծ արժեք ունեցող գործերի, կարպետների եւ մյուս գործվածքների, ինչպես եւ լուսանկարների, գեղանկարների, փաստաթղթերի (տասնամյակների ընթացքում ձեռք բերված) պահպանության մասին խոսելն այլեւս ավելորդ դարձավ: Խոսք չէր կարող լինել նաեւ նորմալ, շուրջտարյա աշխատանքային առօրյայի մասին: Լավագույն դեպքում, ինչպես վկայում են թանգարանի աշխատակիցները, այնտեղ մտնել ու մի քանի ժամ աշխատել (աշխատելու պատրանք ստեղծել) կարելի էր եւ է միայն ամառվա ամիսներին: Հիմա՝ մայիսյան արեւոտ օրերին անգամ այնտեղ մի քանի ժամ գտնվելու համար պետք է էլեկտրական ջեռուցիչ օգտագործել (ինչին ականատես եղանք մայիսի 18-ին): Աշխատանքային նորմալ պայմանների լիակատար բացակայության պարագայում անհիմաստ է խոսել թանգարանի միակ սրահի ցուցադրությունների բովանդակության, ձեւավորման (մատուցման) մակարդակի մասին: Մոտ 5600 ցուցանմուշ ունեցող թանգարանի ներկա կիսատ-պռատ (մեծ մասամբ՝ անհիմաստ ու ոչինչ չասող) ցուցադրությունները մի քանի տարվա վաղեմություն ունեն: Ոչ մի խոսք նոր ցուցադրության մասին: Ոչ մի բուկլետ, բրոշյուր, գիրք՝ առկա ցուցանմուշները հազարից մեկ թանգարան այցելող մարդկանց ներկայացնող: Ոչ մի խոսք նոր ցուցանմուշներ, հնագիտական եւ ազգագրական նոր իրեր ձեռք բերելու մասին: Ոչ մի համագործակցություն շրջանի տարածքում հնագիտական աշխատանք կատարող խմբերի հետ: Ոչ մի խոսք շենքի պահպանության մասին (սրահի ձախ անկյունից, հորդառատ անձրեւների ժամանակ, անձրեւաջրերը թափվում են սրահ, իսկ երկու տարի առաջ թանգարանի անմիջական մուտքի մասում կառուցված կաթսայատունը՝ թատրոնի շենքային մասնաբաժինը ջեռուցելու համար, լույսից վերջնականապես զրկել է ֆոնդերի պահպանության խուցը): Թանգարանի այս վիճակին ծանոթ էինք վաղուց: Եվ, անշուշտ, հարցը կարելի էր բարձրացնել ավելի շուտ, բայց անհարկի (ավելի ճիշտ՝ ավելորդ) էինք համարում, քանզի գորիսյան ամբողջ մշակութային կյանքը հիմնավորապես քննարկելու անհրաժեշտություն ուներ (եւ ունի): Սակայն… Մայիսի 18-ին՝ թանգարանների միջազգային օրը, որ զուգադիպել էր «Թանգարանային գիշեր» համահանրապետական միջոցառմանը, մայրաքաղաքային հեռուստաեթերից իմացանք (հեղինակը մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանն էր), որ օրվա կապակցությամբ հանրապետության մի շարք թանգարաններում (այդ թվում՝ Գորիսի երկրագիտական թանգարանում) տեղի կունենան ուշագրավ միջոցառումներ: Մենք, բնականաբար, անակնկալի եկանք, ուրախացանք եւ այցելեցինք թանգարան՝ մասնակցելու հայտարարված միջոցառմանը: Պարզվեց, սակայն, որ տիկին փոխնախարարի տեղեկությունները հավաստի չեն… Թանգարանների միջազգային օրը, նախ, այդպես էլ թանգարան չայցելեց թանգարանի փաստացի ղեկավար Վարդան Սարգսյանը: Ասում են՝ զբաղված էր Ա.Բակունցի տուն-թանգարանում: Ֆոնդապահը հիվանդանոցում էր: Այնտեղ էին միայն երկու հսկիչը, ովքեր էլ կազմակերպեցին միջոցառումը: Մոտ քսան հոգու մասնակցությամբ ցերեկույթին (մասնակիցները հիմնականում գրադարանի աշխատողներ էին) Լիլիա Հարությունյանն ու Անի Մկրտչյանը (դպրոցականների օգնությամբ) համառոտ ներկայացրին թանգարանի ցուցանմուշների բովանդակությունը, ինչպես եւ գեղարվեստական-ազգագրական ինչ-որ տեսարաններ…

Թանգարանային ցերեկույթին մասնակցում էր նաեւ Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը, ում, միջոցառման ավարտից հետո, ուղղեցինք մեզ հետաքրքրող մի քանի հարց: Քաղաքապետը, ի վերջո, համաձայնեց մեզ հետ այն հարցում, որ թանգարանում հավերժորեն իշխող խոնավության պայմաններում մի քանի տարի հետո իրենց նշանակությունը լիովին կկորցնեն (եթե արդեն չեն կորցրել) այնտեղ պահվող գործերը, կարպետները, ջվալները, խուրջինները, լուսանկարները, գեղանկարները, փաստաթղթերը: Քաղաքապետը համաձայնեց նաեւ այն հարցում, որ թանգարանը պետք է ունենա իրեն արժանի շենքային պայմաններ, որ թանգարանը պետք է ունենա իրավաբանական անձի կարգավիճակ, որ թանգարանի տնօրենը չի կարող համատեղությամբ աշխատել մեկ այլ հիմարկի տնօրեն, որ Գորիսի թանգարանի երբեմնի համբավը պետք է վերականգնվի, որ թանգարանը պետք է դառնա մարզային կամ հանրապետական ենթակայության, որ… Նելսոն Ոսկանյանը, այդուհանդերձ, չի տեսնում այդ հարցերից եւ ոչ մեկի լուծման ելքը, ինչի համար ափսոսանք ենք հայտնում: Գորիսի քաղաքապետի՝ ստեղծված վիճակը բացառապես ֆինանսական եւ շենքային հնարավորությունների բացակայությամբ բացատրելը, սակայն, չի կարող մխիթարող, հանգստացնող հանգամանք լինել, մանավանդ որ այդ հիմնավորումներն այնքան էլ համոզիչ ու փաստարկված չեն: Գորիսում ակնկալում են (մենք՝ նույնպես), որ խնդրո առարկան կզբաղեցնի Սյունիքի մարզպետարանին եւ ՀՀ մշակույթի նախարարությանը եւս, քանզի հարցը շատ կարեւոր է եւ օր առաջ լուծում պահանջող:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Թանգարանային գիշեր

ՄՇԱԿՈՒՅԹ

Այս տարի «Թանգարանային գիշեր» միջոցառումը եւ թանգարանների միջազգային օրը համընկել էին եւ անցկացվեցին ու նշվեցին մայիսի 18-ին: Կապանի երկրագիտական թանգարանը միջոցառմանը մասնակցեց «Գյուղաշխարհ…» ցուցադրությամբ: Մինչեւ ցուցադրանքին ծանոթանալը՝ թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը հավաքվածներին ներկայացրեց օրվա խորհուրդը՝ նշելով, որ այս անգամ «Թանգարանային գիշեր» միջոցառումն անցկացվում է «Թանգարանը ոչ ֆորմալ կրթության կենտրոն» խորագրի ներքո եւ հավելեց, որ թանգարանը երբեմն անում է այն, ինչ չի հասցնում անել դպրոցը: Եվ, իսկապես, ցուցադրանքում այնպիսի գյուղատնտեսական գործիքներ կային, որոնց լուսանկարները ոչ մի դասագրքում չես հանդիպի:

Գրիշա Սմբատյանը նաեւ հայտնեց, որ հաջորդ տարի լրանում է Առաջին համաշխարհային պատերազմի սկսման 100 տարին, եւ թանգարանը 2014-ին նախատեսում է հանդես գալ «Սյունեցիներն Առաջին աշխարհամարտում» ցուցադրությամբ: Պատմաբանը նաեւ ասաց, որ Առաջին աշխարհամարտում հայերը նաեւ զենք են վերցրել՝ հույս ունենալով ազատագրել Արեւմտյան Հայաստանը: Եվ թանգարանն անդրադառնալու է միաժամանակ 1915 թվականի իրադարձություններին: Այս համատեքստում թանգարանի տնօրենը հորդորեց ներկաներին թանգարանին տրամադրել Առաջին աշխարհամարտի վերաբերյալ նյութեր: «Տնտղեք ձեր սնդուկները եւ հաստատ հետաքրքիր բաներ կգտնեք», - այսպես ձեւակերպեց իր միտքը բանախոսը:

Ողջունելով Կապանի երկրագիտական թանգարանի «Գյուղաշխարհ…» նոր ցուցադրության կազմակերպումը՝ Ռոբերտ Գրիգորյանը (էջանանցի) թանգարանին նվիրեց իր հեղինակած «Ձորքի ազգագրական պատմությունը», «Կապանա երգերի» ժողովածուն, «Կապանա անեծքներ, հանելուկներ» եւ ազգագրական ու բանահյուսական այլ արժեքներ: Այնուհետեւ միջոցառման մասնակիցները շրջեցին թանգարանի ցուցասրահներով: Ցուցադրանքում մելիքական եւ կապանյան նշանավոր տոհմերը՝ Մելիք-Օհանջանյաններ (Մեղրի), Աղամիրյաններ, Քարամյաններ, Գաբրիելյաններ, Նուբարյաններ, Ղարագյոզյաններ, Ստեփանյաններ, Փարսադանյաններ եւ այլն, ներկայացնող լուսանկարներ, փաստաթղթեր ու տոհմածառեր էին: Ումառաց տոհմածառը մի ամբողջ պատ էր զբաղեցնում: Առանձին բաժնով ներկայացված էին գյուղաշխարհին առնչվող կենցաղային առարկաներ եւ իրեր, աշխատանքային գործիքներ, արհեստագործական արտադրանք:

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մասնաճյուղը երկրագիտական թանգարանի ժամանակավոր ցուցադրության սրահում ցուցադրություն էր կազմակերպել, որում տեղ էին գտել Սյունիքի պատմական հուշարձանների լուսանկարներ: Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանները մի հատված ներկայացրին «Աշնան արեւ» բեմադրությունից, եղավ նաեւ երգիծանք եւ հումոր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ՈՒՐԲԱԹ • 24 ՄԱՅԻՍԻ 2013Թ • № 13 (286)

Քաղվածք ՀՀ պետեկամուտների կոմիտեի տեղեկագրից

Ցանկ Սյունիքի մարզի տնտեսվարող սուբյեկտների, որոնք 2013թ. հունվար-մարտ ամիսների արդյունքով մտնում են հանրապետության առաջին 1000 խոշոր հարկ վճարողների մեջ

Հ/Հ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2013 ֆինանսական տարվա հունվար-մարտ ամիսներում հարկ վճարողի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)	
			ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտային հարկ)
5	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	3,444,839.6	1,285,958.6
12	ԴԻՆՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ	ԿԱՊԱՆ	1,612,770.9	679,000.0
35	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	641,818.7	219,316.9
88	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	339,863.0	105,000.0
206	ԱՐՊԱՆԻՎ	ԳՈՐԻՍ	120,616.1	8,454.3
286	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	87,415.5	31,300.9
287	ԶԱՆԳԵԶՈՒՐ ՄԱՅՆԻՆԳ	ՔԱՋԱՐԱՆ	86,767.8	33,767.0
332	ԼԵՌ ԷՔՍ	ԿԱՊԱՆ	72,628.6	42,717.9
396	ՍԻՍԻԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ՍԻՍԻԱՆ	62,954.7	15,321.5
432	ԹՈՒՆԵԼ	ԿԱՊԱՆ	54,231.4	22,642.9
486	ԴԱՆԵՍԻԱ	ԿԱՊԱՆ	47,944.9	19,850.8
527	ԿԱՊԱՆ-ԷՆԵՂԺԻ	ԿԱՊԱՆ	43,720.0	43,700.0
557	ՄԵԽ ՆՈՐՈԳՈՒՄ	ՔԱՋԱՐԱՆ	39,630.6	22,517.8
558	ԿԱՊԱՆԻ ՆՈՐՈԳՇԻՆ	ԿԱՊԱՆ	39,562.7	15,625.0
592	ՎԻԼԼԱ ՕՅԼ ՍՊԸ	ԱԳԱՐԱԿ	36,966.2	494.5
630	ՎՈԼՎԱՐ	ԿԱՊԱՆ	35,325.7	19,053.7
695	ՄԱՐՈՒՐ	ԿԱՊԱՆ	32,176.3	5,796.3
720	ԴԵԴԱԼ	ԿԱՊԱՆ	31,064.2	16,175.6
726	ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ	ՄԵՂՐԻ	30,788.3	13,910.0
748	ՔԱՋԱՐԱՆ ՄՈՆՏԱԺ	ՔԱՋԱՐԱՆ	29,605.3	19,018.4
759	ՌՈՅԱԼ ՓՐԻՆԹ	Գ.ՀԱՐԺԻՍ	28,812.1	2,763.0
830	ՄԱՐԻԼԱ	ԿԱՊԱՆ	25,709.4	6,269.5
842	ԱՐԿԱՐԳԱՁ	ԿԱՊԱՆ	25,393.6	14,566.2
870	ՆԵՄԱԼ ՍՊԸ	ԿԱՊԱՆ	24,405.5	6,965.5
876	ՈՍՄԱՐ	ԳՈՐԻՍ	24,211.6	10,924.4
899	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ ՇԱՀԱԳՈՐԾ ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	ԿԱՊԱՆ	23,507.3	13,708.8
903	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԿԱՊԱՆ	23,288.2	22,298.0
994	ՇԱՀՐ	ԿԱՊԱՆ	20,624.0	11,000.0
996	ՈՍՏԱՆԻԿ ՀԱՅՐԵՆՅԱՑ	ԱՆԳԵՂԱԿՈԹ	20,517.4	230.5
1000	ԴԱՆԵՍԱ	ԿԱՊԱՆ	20,425.2	4,025.4

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել՝ Կառլեն Զաքարյանի կողմից Զաբելա Ղահրամանյանին մահացած ճանաչելու պահանջի մասին: Բոլոր անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Զաբելա Ղահրամանյանի (ծնված 03.11.1928թ., հաշվառված Սյունիքի մարզի Տանձավեր գյուղում) գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք. Կապան, Երկաթուղայինների 4, հեռախոս (0285) 5 29 59:

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ê²Ø ì °È ²È° øê²ÜÚ²Ü

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱՋԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 23.05.2013թ.:



Քննարկվեցին «Տաթեւի վերածնունդ» ծրագրի իրականացման ընթացիկ հարցեր

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը մայիսի 3-ին այցելեց Սյունիքի մարզի Հալիձոր եւ Շինուհայր համայնքներ, տեղում ծանոթացավ «Տաթեւի վերածնունդ» ծրագրի իրականացման ընթացքին:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, ռուսաստանաբնակ գործարար Ռուբեն Վարդանյանի, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն Արման Խաչատրյանի, Հայ առաքելական եկեղեցու, տեղական իշխանությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղում կայացած խորհրդակցության ընթացքում քննարկվեցին ծրագրի իրականացման հետ կապված ընթացիկ հարցեր:

Ներկայացվեց «Տաթեւի վերածնունդ» ծրագրում ընդգրկված՝ Տաթեւի վանքի հարակից ութ համայնքում զբոսաշրջության զարգացմանն ուղղված աշխատանքների ընթացքը, նշվեց, որ անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը կխթանի համայնքների զարգացումն ու կնպաստի ծրագրի արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես քննարկվեցին համայնքների գազիֆիկացման, խմելու ջրի եւ ոռոգման համակարգերի վերականգնման հարցեր: Անդրադարձ եղավ նաեւ Հալիձոր-Տաթեւ ճանապարհահատվածում անվտանգության լրացուցիչ միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությանը:

Խորհրդակցությանը կարեւորվեց, որ տարածաշրջանում բոլոր ծրագրերը համահունչ լինեն «Տաթեւի վերածնունդ» ծրագրի տրամաբանությանը, իրականացվեն օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան, ինչպես նաեւ բնապահպանական եւ քաղաքաշինական փորձաքննություն անցնեն:

Հյուրերը շրջայց կատարեցին նաեւ համայնքներում, ծանոթացան զարգացման հնարավորություններին:

mta.gov.am

Ճակատեն գյուղը մարում է

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Ճակատեն համայնքում ապրում է 144 մարդ: Գյուղում ընդամենը 8 աշակերտ է դպրոց գնում: Մինչդեռ տարիներ առաջ շուրջ 100 աշակերտ էր հաճախում դպրոց:

«Ժողովուրդ»-ը Ճակատենի ղեկավար Արծրունի Հարությունյանից տեղեկացավ, որ այս տարի գյուղում արդեն մահացել է յոթ մարդ, իսկ վերջին երեխան ծնվել է հինգ տարի առաջ: «Գնում են, գնում, ամեն օր էլ ընտանիքները գնում են, չեն կարողանում ապրել: Գյուղը դատարկվում է, մնում են ծերերը, իսկ ծերերն էլ մահանում են: Կարամ ասեմ՝ գյուղը մարում է: Ընդամենը երկու երիտասարդ ընտանիք կա: Հիմա էն անճարներն են մնացել. ով որ մի քիչ շանս է ունենում, գնում է», -նկատեց Հարությունյանը:

Նրա խոսքով՝ բոլոր պաշտոնյաներն էլ գիտեն գյուղի վատ վիճակի մասին. «Մինչեւ Մոսկվա էլ գիտեն, որ գյուղը մարում է: Բայց ոչ ոք ոչինչ չի ձեռնարկում: Ո՛չ բնակիչ կա, ո՛չ էլ երեխա»: Իսկ գյուղացիները հիմնականում զբաղվում են հողագործությամբ ու անասնապահությամբ. «Դա էլ, ինչպես Թումանյանն է ասում, էն էլ հրեն հա՝ երկնքից կախված: Ստեղծած արտադրանքն էլ չեն կարողանում իրացնել, թափում են ու թափում»:

slaq.am, 21.05.2013

Մեղավոր է ճանաչվել իր նորածին երեխային շնչահեղձ անելու եղանակով սպանելու մեջ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հիմնավորված է համարել իր նորածին երեխային սպանելու համար Սյունիքի մարզի Հարթաշեն համայնքի բնակչուհի Աննա Երվանդի Մկրտչյանին առաջադրված մեղադրանքը եւ դատապարտել ազատազրկման:

Դատարանը պատիժը պայմանականորեն չի կիրառել եւ սահմանել է փորձաշրջան 1/մեկ/ տարի ժամկետով:

Առաջադրված մեղադրանքն ամբաստանյալ Աննա Երվանդի Մկրտչյանի կողմից ընդունելու եւ դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում դատարանն ապացուցված է համարել, որ Աննա Երվանդի Մկրտչյանն իր նորածին երեխային ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ՝ ձեռքի ափով փակել է վերջինիս արտաքին շնչառական անցքերը, բերանը, քթանցքները եւ այդ կերպ շնչահեղձ անելու եղանակով սպանել նրան:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. մայիսի 7-ի դատավճռով Աննա Երվանդի Մկրտչյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ եւ դատապարտվել ազատազրկման 2 տարի ժամկետով:

Նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել եւ սահմանվել է փորձաշրջան 1/մեկ/ տարի ժամկետով:

Սյունիքի մարզի դատախազություն